Յուլեան տօմարին սրբադրութիւնն է որ եղաւ 1582 ին Գրիգոր ԺԳ. Պապին ձեռօք, զոր այսօր արեւմտայք կը գործածեն: Իւր ճշտութեամբն հանդերձ երկու մեծ թերութիւններ ունի. մէկը՝ յունվարէն սկսած տարեգլուխն է որ ծուռ է և որով ամէն ամադլուխք խախտեալ են իրենց բնական տեղէն՝

աստեղական դրութեանց մէջ երկրորդքը՝ ամսոց անուաններն են որք խառն ի խուռն, շիտթ և ամենեւին անտեղի ու անյարմար են բանասէր ու դիտող ազգի մը համար:

1. Տարեգրութիւն. — Աստեղական կամ արեգակնային դրութեան մէջ՝ որ միակ ընդունելիքն է ժամանակին չափոց մէջ, բնականապէս և դիտար կետ կայ, որոցմէ մէկէն կամ միւսէն կրնայ սկիզբ տարին, որք են և եղանակաց սկիզբը, որոնք աստեղակամարին վրայ նշանակեալ իբր հաստատ կետեր՝ ընդունված են աստղաբաշխօրէն:

Տարակոյս չը կայ թէ այս կետերէն դարնային հասարակածի կեան է որ բնական տարեգրութի կրնայ ըլլալ. ով որ աչք ունի ու զգացում և կը դիտէ ըզրնութիւն, կը տեսնէ թէ գարունն է տարւոյն առաւօտը, կը տեսնէ թէ ձերացեալ տարին դարնան եղանակէն կ'ըսկսի վերստին մասնականալ, բնութիւնը նորէն կ'արթըննայ ու կենդանացնէ ամէն արարած, ժամանակաց և եղանակաց սկիզբը կը դառնայ և վերջնապէս նորէն կ'ըսկսէ տարին զիւր շրջանը:

Գարնամուտէն սկսած այս բնական տարւոյն ամսագրութիւններն բա-

կարի ճիշտ կը պատասխանեն աստեղակամարի կենդանակերպից՝ որոց մէջէն անցնելով կը կատարէ արեւն իր տարեկան շրջանը, և որոց վրայ չափված է տարւոյն բաժանումն ի 12 միս և ի 4 եղանակ:

Բնութեան ամանորեայ երեւոյթները նկատողութեան չառնելով միւս ո՛ր եղանակաց ալ սկիզբէն սկսվի տարին, ամսագրութիւնները դարձեալ կը պատասխանեն կենդանակերպ աստեղատանց:

Հին ազգերը՝ աւելի դիտող բնութեան և աւելի բանաւոր քան զարդիս, միշտ դարնամուտէն կ'ըսկսէին նոր տարին: Իսկ ետքերը երեւելի դէպեր պատահեցան այլ և այլ ազգաց մէջ որոց յիշատակը պատելութեան համար նոյն դէպերէն սկսեալ թմական դնել ուզվեցաւ, և ասանկով երեւան եկան շատ մը քաղաքական թմականներ ու տարեգրութիւններ զորոնք երկար կ'ըլլայ հոս մի առ մի թըւել ու բացատրել շասնինք երեւելագոյնին:

ԳՐԻՍՏՈՍԻ ԹՎԱԿԱՆ. — Գարերու պատմութեան մէջ մարդկային միտքը յափրշտակող ամենամեծ եղելութիւնը Յիսուսի Գրիտոսի հրաշարի գալուստն

ըլլալով տարեկոյս չը կար որ բրես-
տոնէ ժողովորդոց համար քան զայն
երեւելի եղելու թիւն և քան զայն հաս-
տատ թվական չէր կրնար ըլլալ.
ուստի արդէն բրեստոնեոյ և հետ-
ըզհետէ բրեստոնէու թիւնն ընդունող
ժողովորդք ընդունեցին զոյս թվա-
կանը, բնկելով ուրիշ թվականաց գոր-
ծածու թիւեր: Բայց յոսին ան էր
որ տարին մի և նոյն օրը չէր սկսեր
ո՛չ միայն այլ և այլ երկիրներու մէջ.
այլ և մի և նոյն երկրի մէջ զանազան
տարեգրութիւններ կային: 1555 ին կա-
րոյս թ. հրովարտակով մը վերջուց
Յուանայէն միւս բոլոր տարեգրութի-
ւները և հրամեց որ Յունիարէն սկը-
սած տարեգրութիւն ընդունվի և այն
գործածվի ընդհանրապէս. ասանկ
ընդհանրացու և մնաց մինչեւ այսօր
այս սովորութիւնը:

Առաջին ակնարկով միտում մը կոյ
կարծելու թէ Քրիստոսի թվականին
զուգընթաց բերելու համար է որ
յունիարը տարեգրութիւն ընդունված է,
բայց ամենեւին չէ այնպէս. թէ որ
անանկ ըլլար Քրիստոսի ծնունդէն
կ'ըսկսէր տարին ինչպէս Շառլոմայ-
նին օրովն էր. այլ է յունիար տարե-
գրութիւն ուրիշ հնագոյն և դիցարանա-

կան թվականի մը տարեգրութիւն, որոյ
բացատրութիւնն անօգուտ չէ հոս
իլու տարանութիւն խնդրոյն:

Յաւանք կամ յանկար շատը Լատին-
եաց Յանոս կուսաբաշտ թագաւորին
անունէն եկած է, որում ամառ
կանգնեց Հռոմույս Հռոմ քաղքին
մէջ՝ շատուածացնելով զանի: յանուն
խաղաղութեան շատուածի, որոյ իշ-
խանութիւնը ժամանակի և ամաց վը-
րայ ալ տարածեալ ըլլալուն համար,
երկու դիտով ծոճրակ ծոճրակի տու-
ած կը նկարագրէին զանի, որոյ մէկ
գէմն անցեալին կը նայէր, միւսն ա-
պագային: Յանուն կամ իշխատակ
Յանոսի՝ տարեգրութիւն յունիարէն քս-
կըսելու սովորութիւնն ասիս այսպէս
սկսու ու մինչև այսօր մնաց, որոյ
յարգն ու կարեւորութիւնը Յանոսի
երկրօլազուք միայն կարող են կշտել:

Ուստի յունիար տարեգրութիւնը ծու-
է աստղաբաշխօրէն, վասն զի ձման
12րդ օրը կը բնկի փոխանակ սկիզբէն
սկսելու, և յունիար բառն անբանա-
կան ու անակղի, ուստի և բառ մեկ
անընդունելի: Թող Լատինք պաշտեն
կամ չը պաշտեն իրենց շատուածը,
անմուսաց պահեն թող անոր յիշատա-
կը. իրենց դիանալու բանն է. Յոյնք

Տեաեւի՛ն թող Լատինաց. աս ալ
Յունաց դիտնայու. բանն է. իսկ Հա-
յոց ի՛նչ. ի՛նչ հարկ կայ Հայոց Լա-
տինաց կա՛մ Յունաց քղացը բռնել
ու անոնց հեաեւիլ. չ՛ունի՛ն արդեօք
իբենց տարեգլուխը: Բաց սակե՛ Յուն-
վար տարեգլուխը թէ՛ Յունացն ըլ-
լայ և թէ Լատինաց, ուրիշ մեծ ան-
տեղութիւն մ՛ալ ունի, այն է ամ-
սագլխոց խախտումը:

2. Անուշխար. — Ամիս բսելո՛ւ՛ ա-
տեղատան մը մէջ արեւին անցուցած
միջոցը տ՛իմանանք, և 12 աստեղա-
տանց միջոցները 12 ամիս տիկազ-
մեն: Արդ՝ յունվարն մէկը ի՛նչ նը-
շանակութիւն ունի աստղագէտի մը
կա՛մ քիչ շատ խորհող անձի մը հա-
մար, թէ՛ իբրեւ տարեգլուխ Քրիս-
տոսի թվականին և թէ՛ իբրեւ ամ-
սագլուխ: Իբրեւ տարեգլուխ՝ տի յի-
շէ Քրիստոսի ծնունդը որ չէ իսկ կա-
տարված նոյն օրը, այլ ըստ սկանց
առաջ և ըստ ոմանց ետք կատար-
ված է, միանգամայն տի յիշէ Յա-
նոս չատառածը զորոյ անունը կը կը-
րէ այս ամիսը: Իբրեւ ամսագլուխ՝
արեւն իր շրջանին մէջ աստեղատան
մը մէջ մասնելու առաջին օրը տի նը-
շանակեր, մինչդեռ ըստ Լատինաց

20 օր կայ որ մտած է և ըստ Յունաց
8 օր: Սոյնպէս խախտած են միւս ա-
մէն ամսագլուխներն ալ իրենց աս-
տեղատունէն և շփոթութեան մէջ
ընկած: Ուստի ամսագլուխ ալ չէ
յունվարն մէկը և ո՛չ ալ տարեգլուխ,
վասն զի եղանակի մը սկիզբը չէ. և
ի՛նչ խառնակութիւն բառից և իմաս-
տից, և ի՛նչ սյւզանելի շփոթութիւն
յիշատակաց և իրօղութեանց:

Քրիստոսի թվականը աստեղական
դրութեամբ քաղաքական տարւոյն
հետ համաձայնելու համար, պէտք էր
դռնէ դեկտեմբերի 9/21 ին դնել որ ե-
ղանակի մը սկիզբն է և ձմեռն արե-
ւադարձը յարում արեգակը կը մտնէ
յԱյծեղջիւր կենդանակերպը, և աս-
տի ամսագլուխները դրեթէ ճիշտ կը
պատասխանէին կենդանակերպ աս-
տեղատանց:

3. Անուշխար. — Յունվարին ինչ
նշանակութիւն ունենայն ըսինք: Փե-
տրովար (Ֆէրդէ) տեղդի ամիս բսել
է. ասանկ կոչած են Հռոմացիք՝ այս
ամսոյն մէջ իրենց մտքբարդքին շըր-
ջակոյնց մէջ յաճախ տեղդ պատա-
հելուն համար: Եթէ ախտերու ալ ա-
միս նուիրելու հարկ կար, ինչո՞ւ նը-
լախտին (peste) ու հնատախտին ալ

(. օրերս) մէյմէկ ամիս չը յատկացվի:
Մտերեւ յոյս, այսինքն Նրէս՝ պատե-
րազմի չառուածին անուանէն: Ապի-
ւե՛ Անթրիկոս յոյն բառէն ի յիշատակ
Տեչառութեան չառուածու հւոյն Մո-
յիւն Մոյիս գիշու հւոյն անուանէն, որ
էր Արամազդայ հոմանոյշը: Յոմիւն-
Յոմիւն յատուկ անուանէն: Օչոսորսը
ի յիշատակ Օգոստոս կայսեր (1): Սեդ-
րեմեբե՛ լատիներէն եօթներորդ ամիս
բաւլ է, (վրան զի հիներն սկըրբանե-
անաի Մարտէն կ'սկսէին տարին այ-
սինքն գարնան սկիզբէն) բոց հիմա
Հոմմացուց տարւոյն իններորդ ամի-
սը կ'ըլլայ: Հոմեմեբե՛ ութերորդ ամի-
սն բաւլ է, որ հիմա տասներորդ է:
Նոյեմբե՛ր և Դեկեմբե՛ր իններորդ և
տասներորդ բաւլ են, որ հիմա մեասա-
ներորդ և երկասաներորդ են: Ասի-
նաեւ անժխտելի ապացոյց է որ Հո-
մացիք ալ ի սկզբան թըւական անուան-
ներ կու տային ամսոց, ինչպէս հինե-
րը նախնական դարերու մէջ ըստ Աստ-

(1) Օչոսորս յաւերտ՝ Տեբեբ, Քլըր, Նե-
բոն, Դոմիտիան ի լատ գործեցին իրենց հա-
ժաւելց վարափառ անուան ալ անցնել քարե-
շրջին մէլ: Մնացած լատ ամսները պահելն
իրենց ինչ-տիան հին անսանները:

ուածաշնչին որ կ'ըսէ: «Եւ յառաջ-
նամ առաք ամենան արաւնոյ եքոց Նոյ
զէրեայարին դարպանն (1)»: Երանի՛ թէ
այս սովորյթը շարունակած ըլլար և
ամսոց այս թվական անուանբը պահ-
ված ըլլային:

Բայց այս թերութեանց մէջէն ել-
լելու և ամսորին կատարեալ նշառ-
թիւն ու պարզութիւն ապու համար,
փոփարեցի էր սա հետեւեալ ընտան
կերպով սկսել ու յառաջ վարել տար-
ւոյն ընթացքը:

ԲՆԱՅՈՆ ՏԱՐԻ ԵՆ ԱՄՍԱՐՈՒՄԻՏԻ. — Գար-
նային հասարակածի կէտը՝ որ է ա-
րեւին աջահակ վերելքին զրօն, պէտք
էր տարւոյն առաջին օրը սկսել և
անկէ համբել տարին, որ արդէն քը-
րխտոնէութեան հաստատման ժա-
մանակին հետ առնչակից է դատկա-
կան լուսնին պատճառով: որոյ լու-
մը Գարնամուտէն ետքը կը պատահի-
զի Քրիստոնէութեան և Եկեղեցւոյ
հաստատութիւնը՝ քարոզութեամբ
Աւետարանին ի ձեռն առաքելոց՝ Քր-

(1) Առաջին ամիս ըստ ասորաւանական
Նեանն է Հրեից սրայ արաւնն օրը և զա-
րախանի մը Հայկազանց Արեթ ամսոյն և
մը Բնական Գարնին ամսոյ արաւնն առաք:

րիստոսի Յարութեան օրէն սկսեալ
 համարելի է քան թէ անոր Ծննդ-
 եան օրէն. ասով Շնորհական թվա-
 կանին ալ տարեմուտը կրնայ սեպտեմ-
 բրական տարեմուտը, իրարու ըստ
 կարի մերձեցեալ ու համաձայնեալ
 գտնելով, բնութեան ու շնորհաց այս
 երկու ուրախառիթ յիշատակները՝
 Գարուն ու Զատիկ յիրար զուգեալ,
 և միանգամայն համաձայն ըստ ամե-
 նայնի Աստուածաշունչ պատուիրա-
 նին որ կ'ըսէ. «Աօ՞ւս այս եղեցի յեղ ը-
 կեքն ամաց, որովհետեւ եղեցի յաօսս Կա-
 ռոյ (1)»

Եթէ ասոր արդեւք նկատվեցաւ
 ժամանակագրութեանց մէջ ծագելիք
 շփոթութիւնը որ ֆրիստոսի այժմեան
 քաղաքական թվականէն 52 տարի

(1) Ասի արեւմտային այն օրն է որոյ մեջ
 ինքնուրույն գաղութան լուսինը. որովհետեւ
 ֆրանսիացիներն անթիւ պէտ էր լինել լու-
 սինն է գաղութան լուսինը. որով ֆրանսի-
 աբն լուսինն է ասորոստանը լուսինն յիշ-
 օրն որ Կարեւոր էր Բոնապարտի: Ինչպէս որ
 ինքնուրույն ֆրանսիացիներն ինքնուրույն
 լուսինն է Ժ.Գ. որովհետեւ ֆրանսիացիներն
 Զատիկն ինքնուրույն է Շնորհական թվականը
 Բրիտանի Յարութեան:

վար երթալու պարտաւորելով տի պա-
 տահէր. (զի փոխանակ 1872 ի տ' ու-
 նենայինք այս տարի 1840 ի բրեւ շը-
 նորհական ճիշտ թվական) գուցէ
 կարելի էր ուրիշ տեսութեամբ մը.
 զոր օրինակ՝ թվականը փոխանակ
 ֆրիստոսի Ծնունդէն առնելու՝ անոր
 մարդեղութեան խորհուրդէն առնը-
 վէր, որոյ տնօրէնութիւնը Տերամայր
 կուսին յղացմամբ կ'ըսուի, այսինքն
 Աւետման տօնէն որ ամէն ազգաց մէջ
 դարնան աւաջին ամսոյն մէջ կը պա-
 տահի և ըստ Ատիկանց գարնամու-
 տին խիստ մծա օր մը, դարնան 5 ըր-
 օրը: Այս տեսութեամբ միայն հա-
 լանելի կը թուի որ շնորհական և ըր-
 նական տարեմուտը կրնային դիւրաւ
 միանալ: Հոս տարբերութիւնը ինն
 ամիս միայն կ'ըլլար այժմեան թվա-
 կանէն և 1875 ը գարնամուտէն կ'ըս-
 կըսէինք փոխանակ Գ ամիս ետքը ձըմ-
 ումուտէն սկսելու. թէպէտ պղտիկ
 աւջինին նկատմամբ՝ բայց ըստ որում
 տարբերութիւնն բազմամեայ՝ գուցէ
 անընդունելի թուէր շատերուն:

Եթէ ասոնց ս'չ մէկը և ոչ միւտը
 կրցաւ ըլլալ գծաբախտապէս, գոնէ ձըմ-
 ուային արեւադարձի կետը պէտք էր
 ըռնել իբրև աստեղական տարեմուտ

քաղաքական թվականին որ Գրի-
 առի ծննդեան աւուրց ամենամտ
 աստեղական կեան է. ստով ալ դարձ-
 եալ քաղաքական տարին աստեղա-
 կան տարւոյն հետ համաձայնեալ կը
 դա՛վէր, և տարւոյն եղանակներն ըստ
 կարի ճիշտ կը պատասխանէին աստ-
 զարաշխական եղանակաց. Գարունն
 ու Աշունը երկու հասարակածի զրօ-
 ներէն կ'ըսկեւին, Ամառն ու Չմեռը
 երկու արեւադարձի կետերէն. և ամ-
 սազութիները չէին խախտեր իրենց
 աստեղական կետերէն :

Ամսներուն փոխանակ կռապաշ-
 տական ու ընծապետական անտեղի
 և անմիտ, և մասնաւոր անձի, ազգի
 ու երկրի վերաբերեալ անուններ տա-
 լու՝ որոնք գիւրաւ կ'անհետանան,
 պարզութեանն ու ճշտութեան համար՝
 իրենց թվական անունները պէտք էր
 ապ, որք ի բնէ ճշմարիտ և անայլայլ
 աշխարհիս ամէն կողմի միօրինակ կը
 յարմարին, զորօրինակ Նախամիս,
 Երկամիս, Լայցն, և զոր ամէն ազգ
 կրնայ իր լեզուովը թարգմանել. զոր-
 օրինակ արպերէն՝ շէհրէ եմէլէ, շէհրէ
 սանի, շէհրէ սուք, շէհրէ բադի, շէհրէ
 Խաֆ, շէհրէ սադի, շէհրէ սադի, շէհրէ
 սաֆի, շէհրէ Բասի, շէհրէ աւր, շէհրէ հա-

րաւր, շէհրէ ամաւր (1), եթէ երբէք
 Արապք կամ Օսմանցիք արեգակնա-
 յին ամիս գործածելու հարկ տես-
 նին քաղաքական գործողութեանց
 մէջ Նոյնպէս և Յսանկը կրնայ շա-
 րունակել իր նօժանգաւ, դեռամուրա-
 սերը՝ Եւրոպացիք, որօրեւանգաւ աւելըր-
 նելով, և միւսները այն գրութեամբ
 փոփոխելով լրացնել իր 12 ամսոց թը-
 վական անունները :

Նախամսոց մէկը ճիշտ Գարնամսն-

(1) Արեգիմասցին այս ամսոց հետ գործա-
 ծելու համար շաւնին Օսմանցիք լրաւօրացն
 թվական շուն Օսմանեան Տերութեան սկսեա-
 ւորութեանը որ Բրիտաոսի թվին 1500 ին դե-
 զի ամսեցաւ, և սուղապոյն դարեմաւոր շուն
 շէրեմեց Նեմլուզն (Նոր օր) որ արդէն իսկ
 էր արեգիմասցին դարեգիւտի ընդամենէն է
 պարտմասցիս քանջայցն գործապատիւանց մէջ
 և որ ճիշտ գործամասցին այսինքն մարտի 9 ին
 էր պարտմի: Ուստի շէր թվին 1872 Նախամ-
 սի միւր էր պարտմետեան Օսմանեան թվին միւր
 375 Շէհրէ եմէլէ միւր: — փոփոխել է
 որ Օսմանցիք ընդհանրապէս ընդամենին արե-
 գիմասցին այս բնական դարեմաւորն աւար-
 ները և ամսոց թվական անունները. ստով բա-
 նաւոր և սուղապոյն դարեգապատիւան մը
 օրինակ որոտք Էւրոպին սարէլ ազգաց:

տէն սկսելով, այսինքն Լատինաց
մարտի 21 էն, տարւոյն բոլոր ամիս-
ներն ալ գրեթէ ճիշտ կը պատասխա-
նեն կենդանակերպից, այսինքն կեն-
դանակամարի համասանդութեանց
կամ աստղաբանաց, որոց մէջէն անց-
նելով կը կատարէ արեւն իր տարե-
կան շրջանը:

Արեգակնային տարին բաղկացեալ
ըլլալով 565 օրէ, 5 ժամէ, 48 րոպէէ
և 51 մանրերկրորդէ, նահանջը 4 տա-
րին մէջնը և 4 դարադուխ մէջնը պէտք
է որ ըլլայ ըստ Գրեղգորեան տօմարին
որպէս զի արեւոյին շրջանին կատ-
րակները ո՛չ աւելնան ո՛չ պակսին:
Ասի ասանկ շրջալուսն համար է որ
Յուլեան տօմարին տարին 12 օր ետ
մնացած է աստղաբաշխական ճիշտ
տարիէն, ամէն 4 տարի և ամէն դա-
րադուխ անխարապէս նահանջ ընե-
լով: Եթէ այս մեծ վերապակին առջէր
չ'առվի, այս 12 օրվան տարբերու-
թիւնը երթալով կ'աւելնայ ու դա-
րեր անցնելով ամիս տարի կը կազմէ
նոյն տօմարին մէջ:

Բայց Հայոց ի՞նչ փոյթ այս անտե-
ղութենէն. Յուլեան տօմարը Հայոց
տօմար չ'է, այսօր այս տօմարը գոր-
ծածօղք Ռուսերն ու Յոյներն են.

Թո՛ղ ատնը մտածեն: Հայերն ունին
իրենց ազդեցին տօմարը, մենք նա-
յինը թէ ի՛նչ բարեկարգութեան
պէտք ունի այս տօմարը:

Հայոց բօժար. — Այսօր Հայոց թր-
վական ըսվածք որոյ ՌՅԻԲ տար-
ւոյն մէջ ենք, չ'է այն Հայկազանց
թվականը զոր ունէին մեր հախա-
հարը Հայկէն կամ Ջրհեղեղէն ան-
տի. այլ զայս թվականը Մովսէս Բ.
կաթողիկոսը հաստատեց Քրիստոսի
թվին 552 ին ի յիշատակ փոփոխու-
թեանց զորս ըրաւ Հայոց գործածած
չին տօմարին վրայ, և Հայք այնու-
հետեւ այն Մովսէսեան տօմարով վար-
վի սկսան որ անյարմարապէս Հայոց
թվական ըսվեցաւ փոփանակ Մուխ-
եան ըսվելու: Բայց անշուշտ է որ կա-
թողիկոսին ըրած փոփոխութիւնը չէ-
ին արժէր դարադուխ մը կազմելու
որ Քրիստոսի թվականէն նախաակե-
ծար համարվէր: Ուստի կամ Հայկա-
զանց չին թվականը լքնելու չէր,
կամ Քրիստոսի թվականով վարվելու
էր՝ Հայկազանց տօմարին ամառը-
րու խնէրն ասոր յարմարցնելով, և տա-
րին Քաղցցի մէկէն սկսելով որ ճմռան
արեւադարձի և բնական ամառվախ
մը կը պատասխանէ որ է դեկտ. 9:

Հայկազանց ամիսներն ալ ունին ի-
րենց թերութիւնները որով զուրկ կը
մտնան անկողնական ըլլալու յարմարու-
թենէն, զի բնութեան երեւոյթնե-
րուն ամենքը չեն պատասխաներ: Ասի
ամիսներու անուանց նշանակութիւ-
նը ըստ մեծի մասոյն մեզի անծանօթ
է. ասի թերեւս անար դատ, բայց
ծանօթ եղածներն ալ ամէնքն իրենց
բնական տեղը չ'են, պորտիբնակ Գա-
ղոցը որ Հնձար կամ Աթոն բնական
ամիսը տի նշանակէ, անտեղի է ձրու-
սան մեջ ուր ոչ արտահանեմ կայ ոչ
այգեկութ. մէկ քանին միայն իրենց
բնական տեղը կը թըլին, ինչպէս
Քարգացն ու Հրտախը իսկ մնացածը
Արեկ ու Նաւասարդէն զտա՝ յատուկ
անուններ կը թըլին:

Աւել տասնդական անունը իխտ
վայելուչ կը յարմարէր տարւոյն ու-
սալին անոյն, եթէ միւս ամիսներն
ալ աստեղացմէ անունին անուններն
կամ թէ՛ արեգակը այն ամսոյն մէջ
միայն երևէր երկրիս:

Երկրորդ անյարմարութիւնը՝ ամիս-
ներու հաւասարապէս եւ ստանական
օր բաժնիված ըլլալն է, որ 5, 6 օր
Աւելեաց կը թողու տարւոյն վերջը:
Այս աւելեացը իբր տասներեկրորդ

ամիս մը ձեւանալէն զտա՝ աստղարա-
խական այն անտեղութիւնն ալ ունի
որ ամաստղութիւնները աստեղատանց կե-
տերէն զգայի կերպով կը խտխտե-
մինչդեռ այս անտեղութիւնը կրնար
վերնալ եթէ այն լրական օրերը միւս
ամսոց վրայ համեմատական կարգով
մը բաշխուալ ըլլային:

Հայկազանց թմականին ոչսօր մե-
զի համար մէկ ուրիշ անտեղութիւնն
ալ տարին Նաւասարդէն սխիլն է որ
Մրգարի 5 և Յոսատոսի 1 ին կու գայ,
որ ո՛չ բնական տարեմուտ է և ո՛չ
աստեղական ամաստղութիւն: Բայց մեզի
համար իխտ հաւանելի է որ նախ-
նական դարերու մէջ մեր հայկազան
նախահարք՝ ինչպէս հին ժամանակաց
ազգերը, Հրեայք, Պարսիկք, և յետոյ
Հռոմացիք, իրենց սրբազան տարին
դարնամուտէն կ'ըսկէին, որ այսօր
Արեգի մէկն է, ի յիշատակ արարչա-
գործութեան և փրկութեան մարդ-
կան ի ջրհեղեղէն ի ձեռն Նոյեան տա-
պանին որ հանգեաւ Մատաց լեռին
վրայ ուրիկ իջան տարածեցան մար-
դիկ ի դաշան Արարատոյ: Եթէ ու-
րիշ պատճառ մը չրկոյ պատմու-
թեամբ ցուցված, նահանջ չընելու
ստիպութիւնն է որ կ'երևի թէ տա-

բած ձգած է ըզհաւասարդն Օդոստոսի մէջ: Կաւասարդի թէ անունը և թէ հանդէսները կը վկայեն թէ արարչագործութեան և ջրհեղեղի յիշատակը կը ածենին նախնիք ի Հայաստան: Զանգիկ բառ է նա (նէ՛վ կամ նէ՛ւ) որ նոր բնէլ է և «արդ» ամ, զոր մեր նախնիք հայ ձայնով աւանոր թարգմանած են: Ամանորի հանդէսներու մէջ ազաւնի կը թռցնէին ի յիշատակ Նոյայ թռուցած ազաւնայն, և ջրախաղութիւններ կ'ըլլային, ջուր կը սրսկէին իրարու վրայ: Այս ազգային հին սովորութիւնը որ Անահայտաճարին մէջ կը կատարվէր ի Բագրեւանդ և զոր Գրեգոր Լուսաւորիչ փոխադրեց յԵկեղեցի յանուն Յովհաննու Մկրտչի, կայ դեռ մինչեւ ցայսօր հայ եկեղեցեաց մէջ ի ածնի վարդափառի կամ Այրակերպութեան Գրիտատի: Յանկալի է որ անտուաց պահվի այս ազգային յիշատակը, այլ և ցանկալի է որ իր բնական ակզր գառնայ դայ և ամանորի բնտանեկան ուրախութիւնըը Հայկազանց նախնի և բնական տարեմուտին օրը կատարվին, որ է գարնան սկիզբը, որպէս զի հասարակութիւնը խելամուտ ըլլայ անոր ծագմանն ու նշանակութեանը:

Այս յիշատակով է որ սիրելի է մեզի Հայկազանց թվականը որ իր թերութիւններովն հանդերձ իր յարդն ու արժանիքն ունի. նախ իր հնութեամբը, որ այսօր մեր գիտցածը 4575 տարի կը համրէ որ ըստ ոմանց և յոյժ հաւանօրէն ջրհեղեղի թվականն է, մանաւանդ այնպիսի հնութեամբ որ փոխանակ գիցարանական եղելութեան մը վրայ հիմնեալ ըլլալու բնական գէպի մը կամ աստղաբաշխական կետի մը վրայ հիմնեալ է. այն է իր բնական տարեմուտը որ ջրհեղեղէն սկսեալ զարարչագործութիւնը կը յիշատակէ. երկրորդ՝ այն գեղեցիկ գաղափարովն որ ունեցեր են մեր Հայկազուն նախահարք ամիսներու անունները բնութեան երեւութից յարմարցնելու:

Մի՛ պարծի թող Զուանսա այս գաղափարին համար իր աստղագէտներովը որք դեռ երէկ՝ այսինքն 70 տարւոյ չափ առաջ ամսոց բնական կամ մշակական անուններ տուլ մտածեցին. մանաւանդ հիանալ թող զի անգրանկադոյն ազգ մը կոյ հին որոյ ծերութիւնն ալեւորեալ է թշուառութեան մէջ, այլ որ այս մտախն կանխած է զանի 44 դարով և յղացած

ու ծնած է զայդ գաղափարը որ նոր կը թըլի այսօր աչացն Եւրոպայ: Այն ֆռանաացի գիտնոց կաճառէն արեւելադիսաց ոմանց անձանօթ չէին գուցէ Հայկազանց թվականն ու ամիսները, և հաւանօրէն ասոնցմէ առած են այդ գաղափարը. իսկ եթէ յինքենք ալ խորհած ըլլան, պէտք է գիտնան թէ իրենցմէ խիստ շատ առաջ խորհողներ եղած են: Անձիւր հայրենասէր ուսումնականի պարտաւորութիւնն է նախանձախնդիր հանդիսանալ այս հայրենի գաղափարին և չըլքնել զանի երէք օտարին, այլ մանաւանդ բարեկարգել, բարգաւաճել զանի և տիեզրական ըլլալու արժանաւոր կատարելութիւններ տալ անոր:

Շատուց ի վեր և մանաւանդ այս ետքի օրերս փափաք մը կայ ազգին մէջ Յուլեան տօմարը Գրիգորեանին հետ միացնելու, կամ աւելի ճիշտ ըսենք՝ մեր մուրացիկ գործածած ամսոց օրերը Լատինաց ամսոց օրերուն հետ միացնելու: Ասոր համար յատուկ ժողովներ ու գումարումներ պահանջելու խորհուրդներ եղած են, և հասարակութիւնն իրաւամբ հետաքրքիր է իմանալու թէ ինչո՞ւ 12 աւուր

տարբերութիւն կայ մէջերնիս. և իղձ կը յայտնէ թէ ո՞ր կողմի հաշիւն որ շիտակ է անոր հետեւելու ենք:

Օրինաւոր է այս իղձը, և քանի որ խնդիրը կրօնական չէ, կամ թէ ն.թ.է կրնայ ունենալ կրօնական մաս մը՝ կեղեցական տօնեց նկատմամբ, զա՞նք առջի վիճակին մէջ թողլով՝ իբր և եկեղեցական ժողովոց ձեռնհասութեան միայն վերաբերելի, անոր սոսկ գիտնական կամ աստղաբաշխական մասը ամեն ուսմասիրաց հեղինակութեանը կը վերբերի, և այս մասն է միայն մեր ալ քննածն ու քննելիքը:

Սա պէտք է բռնք նախ և միշտ աստղաբաշխօրէն խօսելով թէ Հայերուն այսօր գործածած տօմարը՝ այսինքն ժամանակաց հաշիւը՝ ազգային տօմար չէ, այլ Հռոմացոց Յուլեան ըսված հին տօմարն է, զորոյ աստղաբաշխական հաշւոց սխալները Եւրոպացիք ճանչելով՝ լքած են զանի, և անոր տեղ սրբադրեալ նոր տօմար մը կը գործածեն այսօր՝ ըզԳրիգորեան տօմարը: Եւ այս երկուքին մէջ եղած 12 աւուր տարբերութիւնը նահանջ տարւոյ հաշիւներէն միայն ծագած է որ Գրիգորեանին մէջ ուղիղ են, Գրիգորեան տօմարին հետ միանա-

նայու համար ազգայնոց յայտնած իղ-
ձը՝ սոյն ուղղութիւնն ընդունելու
փափաքն է միտոյն և ոչ այլ ինչ:

Չայս ուղղութիւնը նոյն տօմարէն
առնելու համար ի՞նչ պէտք ունինք
ժողովներու և վիճարանութեանց, մի-
թէ եւրոպացի արդի քաջագէտ աստ-
ղաբաշխից այսքան անգամ փորձար-
կեալ հաշիւները կրկին մե՞նք ալ տի
փորձենք, և դարձեալ ի շնորհս ուղիղ
խոտի մը՝ երկուք ալ սխալ կետեր առ-
նելու ի՞նչ պարտաւորութիւն կայ:
Այդ չէ՛ մեր կարծիքը. Գրիգորեան
տօմարին հետեւիլ չէ՛ կուրօրէն. այլ
մեր իղձը ազգային տօմար մ'ունե-
նալ է որ արեւմտեան տօմարին թե-
րութիւններէն այնչափ հեռանայ և
գէպ ի յուղղութիւն և ի բանաւորու-
թիւն այնչափ մերձենայ որ արեւմրտ-
եանք ցանկան օր մը իրենց տօմարը
մերինին համաձայնել և մեր բնական
տարեւափութեան հետեւիլ, երբոր
սովորութեան գերութենէն ու նա-
խապաշարմանց լուծէն զերծեալ՝ բա-
նաւորութիւն ընտաւելու ելլին այս
նախն:

Ասի այսօր չէ՛ նէ, օր մը տի բլ-
դ: Օրինակ մեզի՝ Փռանասցւոց հը-
տարած մեղքական դրութիւնը, որ

հետրգհետէ ընդունվելու վրայ է միւս
ազգերէ, և տարակիցս չը կայ թէ օր մը
համաշխարհային տի բլայ. և առի՛ ո՛չ
թէ այն ազգին աշխարհվարական աղ-
դեցութեան շնորհիւր այլ շնորհիւ
բանաւորութեան զորոյ կնիքը կը կը-
րէ այն դրութիւնը:

Մենք մեր ազգային տօմարին տա-
րերաշխական բարեկարգութիւնքը՝
Հայկազանց տօմարին նախնական ող-
ւոյն հետեւելով և զանի Բրիտանոսի
թվականին համաձայնելով՝ ներկայ
տարեցոյցիս մէջ ամփոփել փորձեցինք,
զոր փոխանակ Հայագէտն անուանե-
լու Բնական տարեցոյց անուանեցինք,
զի ընդհանրապէս ամեն ազգաց և ա-
մեն երկրի մէջ զորձածվելու յարմար
և ընդունակ կը կարծենք:

ԲՆԱԿԱՆ ՏԱՐԵՅՈՅՑ

Մինչև հոս ընդհանուր կերպով
բովանդակեան կրնայ դուշակվիլ այս տա-
րեցոյցին ոգին ու ընթացքը. բայց ի
խելամուտութիւն հաստատելու թեան ա-
նողու ա չենք համարել անոր զործա-
ծական քանի մը մասնաւորութեանց
որոշ բացատրութիւնը:

Յայտնի է թէ քրիստոնէայ ժողո-

վերջոց համար՝ Քրիստոսի թվակա-
նին առջեւ տի խաւարէին անկէ ա-
ռաջ գործածված մանր ու մոււնր մաս.
նաւոր թվականքը, բաց ի բնական
և տիեզրական այն թվականէն որ
մարդոյս ստեղծմանէն կ'ըսկտէր, որ
միշտ կը տիրէ հին պատմութեան մէջ,
ինչպէս Քրիստոսինը կը տիրէ նոր
պատմութեան մէջ: Նոյնի շոյկա-
զանց թվականն ալ կը փոքրկանոյ
թէպէտ՝ իբրեւ մասնաւոր թվական՝
տիեզրական թվականին առջեւ, իսկ
իր բնական ճիշտ տարեմուտովը կը
համաձայնի անոր, երկուքն ալ գար-
նամուտէն սկսելով, և մեզի համար
համապատիւ է մեր ազգային պատ-
մութեանց և յիշատակարանաց մէջ:
Բայց ընդհանուր կերպով չենք կրնար
զազգային թվականը վերագասել Քր-
իստոսի թվականին որ ըզնոր աշխար-
հը հինէն անջրպետած է բոտ ա-
մենայնի՝ մարգկոցին ընկերութեան
դէմքն սյլակերպելով. ուստի պէտք
էր այս թվականները աստեղական գը-
րութեամբ իրարու համաձայնել՝ ամ-
սազ խոց միաւորութեամբ:

Չոյս ըբինք՝ բնական տարեմուտն
իր տեղը պահելով, սյսինքն Գարնա-
մուտն, և Քրիստոսի թվականին տա-

րեմուտը՝ իբրեւ շնորհական և միան-
գամայն քաղաքական տարեմուտ աս-
տեղական ամսոց՝ Ծննդեան տօնին ա-
մենամերձ գտված աստեղական որոշ
կետին կապեցինք սյսինքն ձմռամու-
տին (1) որ Լատինաց Ծնունդէն չորս
օր առաջ է: Այս տարեմուտով շնոր-
հական տարւոյն ամիսները կատարե-
լապէս կը միաւորին բնական կամ
աստղարաշխական ամսադիտոց, և ա-
սով բնական ամիսները Քրիստոսի թը-
վականին մէջ անշփոթ կերպով կը բ-
նան գործածվիլ առանց բնաւին խ-
չընդոտի. մանաւանդ եթէ սկիզբնե-
րը ընդհանուր գիւրութեան կամ օ-
տարաց ու անվարժից դիւրմբունելի
ընելու համար, Լատինաց կամ Յու-
նաց ամիսն ալ միանգամայն յերջի
թվարեութեան մէջ, զորօրինակ սա-
պէս՝ 1872 Ձիւնեբէ 1 և Դիւնեբէ 9:

Ասով Լատինացմէ 11 օր առաջ

(1) Ձիւնեբէ Դիւնեբէ Ս. Ա. Կոստանթնուպոլիս 30
դեմբերն 7օնին պարտնելով. որ բրիտանիս-
թեան 7օնեց արաջինն է, այս օրը 7օնեբ-
մայն ելեգիցիւն իմ 7օնեբն 7օրեմուտ ալ
գոյցէ իրնայ Եղիւնիլ. ելիլ երբէ 1 Եղեր ար-
տաշտեմուտն պարտնա 7 Եւնեբ արիւ
կերպ 7օնեբն:

սկսած կ'ըլլանք տարին, ինչպէս Լա-
տինք 12 օր առաջ կ'ըսկսին Յունաց-
մէ: Ասի գուցէ նոր շփոթութեան ա-
ռիթ մը թըլի ոմանց, խորհելով թէ՛
երկու անհամաձայն թվականաց քով
երրորդ մ'ալ աւելցաւ. իրաւ այնպէս
կ'ըլլար եթէ անոնց գործածած մի և
նոյն բառերը մենք ալ գործածէինք,
և օրինակի համար՝ երկու յունականե-
րու քով երրորդ յունական մ'ալ հանե-
ինք, իրարմէ 12 ական օր ասորե-
րութեամբ. իսկ մենք չըտի ըսենք
Յունականի 1, 12, 24, հապա յունակա-
րութեան մէկը կամ միւսը տի դենք մեր
բնական ամոյն հետ ինչպէս վաղուց
անտի կ'ընենք մեր Յայամաուրաց
մէջ, զորօրինակ Արեգի 1 և Մարտի
9: Եւ եթէ ուզին աւելի ճշգեւ թէ
ո՛ր մարան է, դժարին չ'է Յ. կամ Լ.
գլխագիրն աւելցնել Յանոց կամ Լ-
ոցնոց նշանակելու համար:

Բնական ամիսները ամէն տօմարի
մէջ և ամէն թվաբերութեան հետ
կրնան վարվիլ. բաւական է որ տա-
րեմուտը չօրս եղանակներէն մէկուն
սկիզբէն սկսած ըլլայ կամ դոնէ աստ-
ղաբաշխական ամսագլխոց մէկէն,
բայց բնական տարեմուտը՝ այսինք
Գարնամուտը ամայն գլխէն ջրխախ-

տելով. ինչպէս որ կը վարվին սուեղծ-
ման և հայկազանց թվականին հետ
որք Գարնամուտէն կ'ըսկսին:

Ամոց թուական անուանքը ամե-
նէն աւելի բնական և բանաւոր ա-
նուններն են որ հողագիտիս ամէն
կողմի համար կիրաւելի և ընդունե-
լի ըլլալու յարմարութիւն ունին: Ա-
ռաջին մարդիկ ալ սկզբանէ այսպէս
կը գործածէին, սրբազան պատմու-
թեան վկայութիւնը բաւական է.
«Ե- յամիտան Խօնիբարդսմ նարա րա-
դանն է լիբին Արարտոց».
«Յամիտան ա-
րաւնում որ օր մի էր ամայն, նաապեաց
Լարն և Եբոց Եւր ըզնիզան րապանին»:

Զրհեղեղէն ըզկնի, ազգաց ու լեզ-
ուաց բաժանմանէն ետքը սկսան մար-
դիկ այլ և այլ երկիրներու մէջ այլ և
այլ մասնաւոր անուններ տալ ամոց:
Եղանակաց և բնութեան երեւութից
համեմատ՝ ամոց մշակական անուն-
ներ տալու առաջին գաղափարը Հայ-
կոյ է որոյ սերունդը մինչեւ ցայսօր
պահած է զանի թերեւս յանգէտս Ե-
տարաց, և որոյ համար իրաւամբ պար-
ծելով հին հեղինակաց մէկը, անոր
ստուածատուր ձրից մէկը սեպելով
իր տօմարն ալ, կ'ըսէ համարձակա-
պէս հայկազանց համար՝ թէ Աստուծ-

մէ առին «Քչո՞ժարն, ա՛նդ Մուլէն աւր
Հոյլ յարաւ զիւր շնն» : Անտարակոյս
կը թըւի թէ մեր դիւցազն նախա-
հայրը ոչ միայն ճարտար շարժիչ էր
աղեղան, այլ և թըւոց ու չափոց, և
գիտօղ երկնային մարմնոց : Առաջինն
եղաւ տարեցոյց տալու իր նորածին
սպիւն, սրբադան տարեմուտը՝ որ հաս-
տատուն էր՝ գարնամուտէն սկսելով
և Ամառ տօնելով (ինչպէս որ Հրեայք
ու Պարսիք ալ կ'ընէին իրենց կրօ-
նական կարգաց մէջ) : Իսկ Նաւա-
սարգ տարեգլուխը քաղաքական էր
և անհաստատ :

Չայս գեղեցիկ գիւտը՝ որ պատիւ
կ'ընէ հեղինակին և արժանի ամենայն
պարծանաց անոր ազգին, Հրեայք
Մովսէսի կը վերագրեն և Հայք Հայ-
կոյ հնագոյն քան ըզՄովսէս : Այս
մասին աւելի ընդարձակ տեղեկու-
թիւն խնդրօղնները՝ Հ. Ղեւոնդ Ալե-
շանոյ Հոգեշնորհ վարդապետին սի-
րահիւս տողերը թող կարդան Յուլի
Հոյրենեոյ հասարնեբուն մէջ՝ «Հայկոյ
չրջան և Սկիզբն մարդկութեան ի
Հայս» վերնագրով գլուխները, որոց-
մէ շատ լոյս և ոյժ քաղեցինք :

Մեր դրած մշակական անուանքն
այլ հեռի կռապաշտական կամ բրո-

նապետական յիշատակներէ՝ Հայկա-
զանց տօմարին ոգւոյն և իմաստին
հետեւելով է. միայն աւելի ճիշտ ու
համեմատ բերել ուզած ենք բնական
երեւութից՝ և բառերն աւելի ծա-
նօթ, որոց նշանակութիւնն ինքնին
իրենց արմատէն յայտնի է առանց
իսկ մշակական յօդուածոց զոր ամէն
մէկուն քով դրած ենք ի պէտս ինչ
հողագործին :

Այս մշակական անուանքը թէ-
պէտ ամէն երկրի չեն կրնար յարմա-
րիլ՝ բնութեան երեւոյթներն երկրիս
ամէն կողմ՝ միօրինակ չը պատահե-
լով : Բայց բարեխառն դօտուոց տակ
գտօղ երկիրներու համար՝ ուր ենքս՝
խիստ յարմար են : Ուստի թըւական
և մշակական անուաններն իրարմէ չը
զատելով՝ մէկը միւսին իրրեւ բացա-
յայտիչ երկուքը մէկէն դրինք մեր
տարեցոյցին մէջ որք միօրինակ ու
անտարբեր կրնար գործածվիլ մէկը
միւսին տեղ :

Հին անուանց նկատմամբ՝ պզտի
բարեմասնութիւն մ'ալ աւելցնել
կարծեցինք նօրեբուն վրայ՝ իւրա-
քանչիւր եղանակին ամոց յատուկ
յանդ մը տալով, բստ կարի նմանա-
ձայն եղանակին անուան, որպէս զի

մշակը՝ թէեւ իմաստին այ ուշագիւր
չ'ըլլայ, կարենայ յանգէն իմանալ թէ
այս ինչ ամիսը ո՞ր եղանակին մէջն
է: Չորօրինակ ամիսն՝ իր ամիսները
Հնձար, Տօթար, Մրդար (կրճատ-
մամբ իբր Հնչուար, Տօթուար, Մրգուար)
Չմեռ՝ իր ամիսները Չիւներ, Սառ-
ներ, Մրդկեր (իբր Չիւնուներ, Սառ-
ներ, Մրգուներ): Գարուն և Աշուն նը-
մանայանդ ըլլալով, ասոնց ամիսները
իրարու չը շփոթելու համար պէտք էր
իւրաքանչիւրին ամսոց խումբն ալ
եղանակէն այլոյանդ ձայնով յորջոր-
ջել: Չարթին, Մարդին, Մարդին (իբր
Չարթայն, Մարդայն, Մարդայն) Գար-
ունն յատկացեալ: Կթօն, թառամօն,
Միգօն՝ Աշունն յատկացեալ:

Հիներուն վրայ երկրորդ բարեմա-
նութիւն մ'ալ զոր խիստ փոքրիկ հա-
մարելու չէ, աւելեաց օրերուն հա-
ւասարապէս բաշխուամ է 12 ամսոց
վրայ: Այս բաշխումը այնպէս մ'ընել
ուզած ենք որ՝ թէ՛ ամսադրութիւնները
չը հեռանան կենդանակերպ աստե-
ղատանց կետերէն, և թէ՛ մշակը իս-
կոյն իմանայ անոր թըւական անունէն
թէ այս ինչ ամիսը քանի՞ օր կրնայ
ունենալ:

Աւասիկ այս ամենապարզ գրու-

թիւնը. «Այն ամիսն որոյ անունը ան-
ղոյք թըւով կ'ըստի, անղոյք թըւով
կ'աւարտի այսինքն ունի 51 օր. այն
ամիսն որոյ անունը զոյք թըւով կ'ըս-
կրտի, զոյք թըւով կ'աւարտի և ունի
50 օր, բաց ի երկուսնամիսէն որ
հասարակ տարւոյ մէջ 29 օր ունի,
իսկ նահանջ տարւոյ մէջ կը լրանայ
և կ'ունենայ ճիշտ 50 օր: Ինչպէս Նա-
խամիս, Եւամիս, Հնգամիս, և այլն,
ունին 51 ական օր. և Երկամիս, Քա-
ռամիս, Վեցամիս, և այլն, ունին 50-
ական օր:

Ահա բնական տարեցոյցին կար-
գադրութեան ըտր պատճառներն ու
բացատրութիւնք օրոնց վրայ կը հը-
բաւիրենք ճշմարիտ բանասիրաց ուշը:

Մենք այս կարգադրութիւնը ո՞չ
թէ իբր քմածին նորեձեւութիւն մը
կը ներկայացնենք մերագնեայ հասար-
ակութեան, այլ իբր օգտակար բարեկարգութիւն հիմնեալ ի վերայ բը-
նական գիտութեան և բանաւորու-
թեան, նպատակաւ ազգային ուղիղ
աւմար մ'ունենալու որ ցանկալի ըլ-
լայ ամեն այլազգեաց: Չենք կրնար
չը խոստովանիլ թէ ասոր ազգավին ըն-
դունելութիւնն իղձ մըն է զոր շատուց
ի վեր կը տածենք. չենք կրնար բսել

Թէ անտարբեր աչօք կը տեսնենք մենք
մեր ազգին օտար ամարներու մէջ
մուրացիկ թափառելը, օտարաւի կը-
նաց ու ձայնից հետեւելը, ազգ մը մա-
նաւանդ որ ըզրօմարն ինք հնարած
և ըզրնական տարեհափութիւնն ինք
հաստատած է զուսաջինն: Բայց ա-
սով հանդերձ՝ ամեն տեսակ նորոգու-
թեան մէջ ժամանակին կից նախա-
պաշարմունքն ու այլ և այլ դժարու-
թիւնքն ալ անձանթ չ'են մեզի, և
եթէ այսօր ազգը չ'ընդունի զայս կար-
գադրութիւնը, հոգ չ'է. իւրօքանչիւր
անհատ կրնայ ընդունիլ զանի և իր
առանձին դործօղութեանց մէջ ի կեր
ուսնուլ, ազատ է: Իսկ եթէ ոչ որ
ընդունի, այն ալ շատ հոգ չ'է, մեր
բողձանքը դարձեալ լքամ կը համա-
րինք. քանզի մեր յոյսը մեր ժամանա-
կի մարդոց ընդունելութեանը վրայ
չ'է բոլորովին, այլ մեր յուսոյ և ըզձի
մեծագոյն մասը ապագայ սերունդին
վրայ է որ ժամանակակից կրքերէ ու
նախապաշարութեանքէ ազատ՝ աւելի
լուսաւոր և անկողմնակալ աչօք կը դա-
տէ զիւր նախորդաց գործը: Մեր գայս
իղձը գոհացուցած է կուդէմպերկ'
ձայներնիս մեր յաջորդաց հասցնելու
միջոցը երաշխաւորելով: Այս մեզի

բաւական է:

Մեր ակնկալութիւնը ազգին մէջ
արթնցած յառաջդիմութեան ոգւոյն
վրայ է որ օր քան զօր աւելի տի ծա-
ւալի: Մեր խօսքը՝ թէ ներկայ և թէ
յետագայ դարուց մէջ՝ այնպիսեաց
է որք յամենայնի ուղղութեան, բա-
րեկարգութեան և բանաւորութեան
կուսակից կանգնիլ կ'ախորժին՝ գուհ-
կին ծիծաղական երեւնալու անտի
վախն ընդօրոնելով, քան թէ ծթած
նախապաշարմանց ու անիմաստ սով-
որութեանց տակ դերի՝ Յանոսի և Ա-
րեսի ծնրադիր մնալ: այնպիսեաց որք
կը սիրեն բանական լուսոյ հետեւիլ
յառաջդիմութեամբ քան անբանա-
կան գից երկրպագել յետորնկրկմամբ:
Այս թիւը տի բազմանայ. մենք յա-
ռաջդիմութեան հաւատ ընծայօղ-
ներէն ենք:

ՌՈՒՍԻՆԵԱՆ

7 կը՞ն 1871.



ԵՐԿՐԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԱԳՆՏԻ

ՆԱԻԱՐԱՆ

Այն զգացումն որով կը ցանկանք գիտնալ մենէ տուաջ եկած անցած մարդոց վիճակն ու արարքը, մեզ կը գրգռէ նաեւ հետազօտել թէ ի՞նչ էր առաջ այս երկիրս որ միլիօնաւոր սերնդոց թատրարեմն եղած է. զի անհրաժեշտ կ'ղգանք թէ երկրագնախապատմութիւնը մարդկային ազգին պատմութեան հետ սերտ կապակցութիւն մ'ունի, և փորձառութիւնը կը ցուցնէ թէ կլիմայից փոփոխութիւնքը մեծ յեղափոխութիւններ բերած են մարդկային բարուց ու սովորութեանց մէջ որք անուրանալի ազդեցութիւն մ'ունին իրաց անցից վրայ:

Բայց նախ, իրա՞ն է արդեօք թէ երկրագունտս պատմութիւն մ'ունի: Եթէ երկիրս նկատենք իբր անկենդան զանգուած մը (masse), հարկաւ ծաղրելի անուն մըն է մեր վեր-

նագիրը, քանզի անկենդան մարմին-
ները չեն կրնար պատմութիւն մ'ու-
նենայ. սակայն չը կայ բնութեան մէջ
մարմին որ անկենդան ըլլայ, այսինքն
կեանք մը չ'ունենայ ըստ ինքեան:
Չը կայ բնութեան մէջ առարկայ մը
որ սկիզբ ունեցած չ'ըլլայ և վերջ ալ
չ'ունենայ. ինչպէս բոյսերը, կենդա-
նիք ու մարդ, այնպէս ալ քարինք ու
մետաղք ունին իրենց ծնունդը, ա-
ճումն ու մահը. սակայն ինչպէս որ
մահ ըսելով կ'իմանանք մասանց քայ-
քայումը, այնպէս ալ ծնունդ ըսելով
տ' իմանանք այն մասանց հանգանա-
կումը: Չիք ինչ որ յոչինչ դառնայ և
չիք ինչ որ սչընչէ յառաջ գոյ ի բը-
նութեան. գեր-բնական զօրութիւն
մը՝ բնութեան հեղինակ՝ մեայն կա-
րող է սչընչէ նորաստեղծել: Բայց
այս խնդրոց լուծումը թողով աստ-
ուածարան իմաստասիրաց, դառ-
նանք մենք մեր երկրազնաին որոյ
համար կը հարցնէինք՝ թէ արդեօք
ունի պատմութիւն մը:

Առանց ժամանակին անդնդոց մէջ
խորատու գեղութեան, ներկայ ժամանակին
մէջ անդամ՝ այնպիսի յեղափոխու-
թեանց հանդիսատես կ'ըլլանք եր-
բեմն որ յայտ յանդիման կ'ապացուց-

նեն մեզի թէ երկիրս միշտ մի և նոյն
վիճակին մէջ չը մնար: Ապագէն կը
տեսնենք որ ծովերուն մէջէն ցամաք-
ներ կը պորտկան, լերանց դազաթնե-
րէն հրաբուխներ կը ժայթքին. այս-
պէս այլ և այլ տեսն երկրիս մահե-
րեւոյթը կերպարանափոխ կ'ըլլայ:

Եթէ մենք ալ աշխարհիս հետ միա-
սին դոյութիւն ասած ըլլայինք ու մի-
ասին հասած ըլլայինք մինչև այս օրս,
ի՞նչ անհուն փոփոխութեանց հան-
դիսատես եղած տ'ըլլայինք. կամ թէ՛
եթէ մեր ծնած օրէն՝ մեզի քանի մը
միլիօն տարվան կեանք սահմանված
ըլլար, ապագային մէջ ի՞նչ հրաշալի
փոփոխութեանց տկանատես տ'ըլլա-
յինք. այն ահագին ովկիանները՝ ու-
րոց վրոյ ամիսներով կը ճամբոր-
դենք, տի տեսնէինք բարգաւաճ եր-
կիրներ դարձած. այն բարերեր հո-
ղերը՝ որոց անոյշ պտուղները կը ճա-
շակենք, ջրով ծածկված: Չը կայ ա-
ռարկայ մը բնութեան մէջ որ ան-
գործ կեցած ըլլայ. ա՛ռ քար մը, նա-
յէ՛, կարծես թէ անկենդան զանդ-
ուած մըն է, օչ կ'ուտէ, ոչ կը խմէ,
ոչ կը շարժի, ոչ կը ձերանայ, ոչ կը
մեռնի. սակայն բու տեղութեանդ
տկարութիւնն ու կենացդ կարծու-

Թիւնն է որ քենէ կը ծածկէ զանոր
կենցաղը. այն քարը կերպով մը կ'ու-
տէ, կը խմէ, կը շարժի, կը մեծնայ, կը
ծերանայ, կը մեռնի. որովհետեւ ան-
դադար կ'ալլայի ու վերջապէս իր բը-
նու-թիւնը բոլորովին կը փոխէ: Այս-
պէս երկիրս ալ մեզի անկենդան զանդ-
ուած մը երեւնալուն պատճառն այն
է որ անոր յեղափոխութիւնքն այն-
չափ դանդաղ են որ մեր տեսութեան
չեն զարներ: Երբոր ժամացոյցիդ փոքր
տակդին վրայ նայես, կարծես թէ ան-
շարժ կեցած է. բայց սակայն աղէկ
գիտես որ կը յառաջէ. երբոր շարու-
նակ մէկու մը հետ կենակցես, շէս
նշմարեր անոր կերպարանափոխու-
թիւնը. ամէն օր առջի օրվան պէս կը
տեսնես ինքզինքդ հայիկին մէջ. բայց
սակայն ամենքս ալ միշտ փոխվելու
վրայ ենք առանց զգալու: Ուրեմն
չ'ըսենք ալ թէ երկիրս իր պատմու-
թիւնը չ'ունի, քանի որ ան ալ մեզի
պէս փոփոխութեանց ենթակայ՝ կ'ա-
ծի ու կը զարգանայ, կը սնանի ու
կ'ապրի:

Թողո՛ւնք պահ մ'ուրեմն այն մարդա-
խողխող թափառորաց պատմութիւն.
քը որոց փառքն իրենց թափած ար-
եամբն է կշռելի, և զբաղինք քիչ մը

մեր ամենուս բարեացապարտ մօբը որ
է Երկիր. առնո՛ւնք ի ձեռին գիտու-
թեանց անշէջ ջահը, իջնի՛նք ժամա-
նակաց խոր ու մթին անդունդը ու
հանենք ի լոյս մեր երկրագրնաին
պատմութիւնը. պատմութիւնք մեր եղ-
բարց թէ ինչպէս և ուստի՛ ծագումն
առած է այս գունտը, ի՛նչ վիճակ-
ներէ անցած մինչև այս աստիճան
հասնելու համար, ի՛նչ տեսակ արա-
բածոց գոյութիւն ու կեանք տուած
է իւր զանազան եղանակաց մէջ:
Նոր է այս գիտութիւնը տակաւին
և կարօտ կատարելութեանց. բայց
մեծամեծ հանձարներ՝ զորոց ան-
ուանքն ըստ առթին տի յիշենք,
քրանաթոր երկօք բաւական լոյս սրփ-
ուած են անոր վրայ՝ միտք գոհաց-
նելու չափ: Մենք ալ այժմ՝ սոյնչա-
փով գոհանալով և ի խորոց սրտի ե-
րախտագէտ բլլալով այն անմահ գիտ-
նոց, եթէ չենք կարօզ անոնց պէս նոր
լոյսեր սփռել, գոնէ անոնց սփռած
ըւստի՛ն ողեւորինք, և զանի մեր նը-
մանեաց հաղորդելով՝ երկրիս վրայ
գիտութիւնը ծուլալելու օժանդա-
կենք, զի անով միայն կարելի է մար-
դոյս ազատ ու անդորր կենցաղ հայ-
թայթել:

Որ տեղէն որ սկսիս երկիրը փորել, իւրաքանչիւր 55 մեդր խորութեան մէջ կը տեսնես որ ջերմութիւնը մէկ աստիճան կ'աւելնայ. սոյն համեմատութեամբ ըսել է որ երկրիս կեդրոնը 195,25 կ'աստիճանի ջերմութիւն կայ, ջերմութիւն մը զօր մեր երեւակայութիւնը չը կրնար ըմբռնել. բայց չ'երթանք մինչեւ երկրիս կեդրոնը, այլ երկրիս շառաւիղին յիսներորդ մասը միայն իջնինք երեւակայութեամբ, չոն իսկ դեռ տի գաննէք 5,800 աստիճանի ջերմութիւն որ կարող է ամենակարծր ժայռերը հրեղէն հայտնութեան մը մէջ պահել. և որովհետեւ երկիրս յերեւան գտլէն ի վեր իր աքբութիւնը յայտնի նշաններով նուազելու վրայ է, տարակոյս չը մնար թէ ասկէ հազարուոր դարեր առաջ այն աստիճան էր երկրիս ջերմութիւնը որ ոչսորման բոլոր մեր տեսած առարկաները կազմելին կամ շոգեկան վիճակի մէջ էին:

Ուրեմն երկիրս ի սկզբան ուրիշ բան չ'էր այլ կազային զանգուած մը՝ միլիոններ անգամ աւելի մեծ քան հի-

մա. քանզի ծանօթ է՝ թէ ամէն մարմին հաստատուն վիճակէն կազայինի փոխված առեն կ'ընդարձակի, ինչպէս որ ալ կազայինէն հաստատունի դարձած առեն կ'ամփոփի: Եթէ մէկը այն առեն երկրէս առաջ գոյացած մոլորակէ մը դիտէր զերկիր, արեւէն բիւրայատիկ մեծ տի տեօնէր զանի, և հաստատուն աստղէ մը նա. յօղին երկիրս ա'երեւէր նման սոյն ամպային աստղաց որոյ համար կ'ըսէ շերշէլ թէ գոյանալու վրայ եղող աշխարհներ են:

Այոպէս էր ուրեմն երկիրս իր գոյութեան առաջին կերպարանին մէջ. բայց յետոյ սոյն կազերը կամաց կամաց պտղելով սկսան թանձրանալ ու մամանիկ կերպարան մը առին երկրիս: Ասոր տպացոյցն է երկրիս բեւեռներուն ասփակ ըլլալը:

Երկիրս իր ծննդեան առաջին վայրկենէն սկսած է իր առանցքին վրայ դառնալ: Այս հոլովումը երկու հազարակ զօրութիւններ գոյացուցած է իր մէջ. մէկը կերտնալէ անուանեալ որ կ'ուզէ սոյն գնտին ամէն տարերքն ամփոփել կեդրոնին վրայ, և միւսը կերտնալէ որ կը ջանայ նոյն տարերքը կեդրոնէն հեռացնել և տ-

գատել միև զօրութեան կապերէն։ Այս երկու զօրութիւնքն աղէկ մ'ըմբռնելու համար, չուանի մը ծայրը քար մը կապէ ու ձեռքիդ մէջ ուժով մը սկսէ դարձնել քու ձեռքդ ահա կեդրոնածիգ զօրութիւնն է որ թող չը տար քարին փախչիլ։ Եթէ յանկարծ չուանը փրթի, կը տեսնես որ քարը ուժգին մղմամբ մը օդոյն մէջ կը սլանայ և հեռուն կ'ընկնի. այն մղուի է ահա կեդրոնախոյս զօրութիւնն որ կեդրոնածիգին յաղթելով անոր կապանքէն ըզքարն ազատեց։ Յայտնի է որ եթէ այս երկու զօրութիւնքն երկրիս ամէն կողմը իրարու հաւասար ըլլային, անոր գնտային ձեւը բնաւ չը տ'այլայլէին. բայց ուր որ արագութիւնն աւելի է, կեդրոնախոյս զօրութիւնն ալ սաստիկ է հոն. և որովհետեւ հասարակածին կետերը բեւեռներուն կետերուն հետ մի և նոյն ժամանակին մէջ իրենց շրջանը կատարելու համար՝ շատ աւելի միջոց ունին ընթանալու քան բեւեռային կետերը, ուստի պէտք է որ շատ աւելի արագ դառնան. հետեւապէս այն շրջանակին վրայ կեդրոնածիգ զօրութիւնն աւելի սաստիկ ըլլալով, կեդրոնախոյսը ծիգ թափած

է կեդրոնէն հեռացնելու գանի և ուսած ձեւ մը տուած է անոր. իսկ այս զօրութիւնը տկար ըլլալով բեւեռներուն վրայ ու կեդրոնածիգը զօրաւոր գտնելով՝ երկու բեւեռները մօտեցած են կեդրոնին ու տափակ ձեւ առած են։ Արդ եթէ երկեր ըսկրզրանէ անտի հիմակվան ձեւն ունենար, հարկաւ ոչ բեւեռները տափակ և ոչ հասարակածն ուսած տ'ըլլար. քանզի յայտնի է թէ հաստատուն մարմին մը որքան ալ ինք իր վրայ դառնայ, բնաւ ձեւը չը փոխեր։ Հագարաւոր դարերէ կտքը՝ ջերմութիւնը նուազած ըլլալով թողաւ երկիր զիւր ամպային կերպարանն ու եղաւ անկզբ ու հրեղէն ծով մը միակերպ յուզեալ ահագնասաստ փոթորիկներէ զոր կը յարուցնէին իւր ծոցին մէջ տեղի ունեցած բիւրաւոր տարրազննական (chimique) պատահմունք։ Երկար ատեն այսպէս և երթալով ջերմութիւնը նուազելով՝ ասոգիս անդին հրաշէկ կոյտեր սկսան ձեւանալ որք իրարու բաղխելով ու փշրելով վերջապէս փական իրարու և երկրիս առաջին կեղեւը կազմեցին։ Թանձր ու ծանրակշիռ շոգիները երկրի երեսը մնալով աղամզիին խա-

ւարի մը մէջ կը ծածկէին զանի, իսկ
թեթեւ ու բարբառէի կազէրը վեր
էլլելով լուսեղէն շրջապատ մը կը կազ-
մէին: Երկիր այն ատեն արեւի նման
ինքնալոյս աստղ մըն էր. քանզի արեւն
այ հիմա տղայ աստղ մըն է որ ինքն
այ իր ժամանակին մեր երկրին ձեւը
տ'առնու և ուրիշ նորածին աստղ
մը լուսոյն տի կարօտի: Շատ աստեղք
յանկարծ յանկարծ աներեւոյթ եղած
են երկնից երեսէն, որոնք բացատրե-
լի են վերոյիշեալ օրէնքը:

Ո՞վ կրնայ նկարագրել այն ահար-
կու հիաքանչ տեսարաններն որ կը
գոյանային այն ատենվան ռոսկալի
մըրիկներէն որոց քով մեր գիշերհա-
ւարի փոթորիկները գարնային անոյշ
զեփիւռներ են: Ա՛ երկն մթնոլորտը
իւր ամեհի արագութեամբ խելքէ
մտքէ վեր կատաղի հովեր կը յարուց-
ներ որոնք վարը գիզված թանձրա-
խիտ ամպերը փարատելով՝ լուսեղէն
գօտիներ կը կազմէին նորածին երկ-
րագնտիս բոլորտիքը, ինչպէս որ կը
տեսնենք այսօր Լուսնիմագ մոլորա-
կին շրջեւը: Երկիր այն վիճակին մէջ
ստեղ ստեղ ահագին շփրական հո-
սանքներ կ'արտաբերէր որոցմէ կը
ծնէին բոցածածանչ հիւսիսայգիներ և

թնդաթուռոց որոտումներ, մինչդեռ
անդիէն հրալոյծ մետաղէ տարափ-
ներ ովկ'անի նման երկրիս վրայ թա-
փելով՝ օգը կը մտքէին ու պաղելով
երկրիս արեւի հաստատուն ձեւ մը
կու տային:

ԱՌԱՋԻՆ ԵՂԱՆԱԿ

ԿՈՄՔՐՈՅԻՆ ՀՈՂ:

Ո՞ր ատեղէն որ ըստիս երկրիս խորն
իջնիլ նախ ամեն տեսակ ժայռերէ
անցնելէք ետքը՝ վերջապէս կը հաս-
նիս կրանիդին: Շատ հաւանելի է ու-
րեմն որ այն հրեղէն ծովին վրայ ձե-
ւացած սուաջին կեղեւը կրանիդն ե-
ղած ըլլայ: Գետոյ այն ապառաժնե-
րուն վրայ ընկած եռացեալ տարափ-
ներն ու անոնց անդնդոց մէջ դահա-
վիժօղ հրաշէկ հեղեղներն այն կրա-
նիդեայ լեռները քայքայած և անոնց
բեկորները նախնական ձորերուն մէջ
դրորած են: Այս քայքայումը (de-
composition) խիստ երկար ժամանակ
տեւած է, վասն զի այսօրվան բոլոր
երկրիս վրայ պատած ջուրերն այն
ատեն դեռ մթնոլորտին մէջ շոգե-
կան վիճակի մէջ էին. կազերուն տաք-
նալն ու պաղելը միշտ գտնդաղ ըլլա-

լով հարկաւ այն շոգիները շատ ժամանակ կը պահանջէին պաղելու համար: Ուստի բազմաթիւ դարերէ ետքը՝ այն ջրհեղեղներուն կրանիդեայ սպառաժներէն հանած աւազուտ ու կաւային փշուրները ստուար խաւ մը (couche) յօրինեցին որ եղաւ առաջին շարժական հողը և խարխիս այն ամեն հողոց որ ետքէն ծովերուն յատակը ձեւացաւ:

Այն հրաշէկ սպառաժներուն վերայ ընկած տղմուտ ջուրերը վերստին շոգիանալով՝ հիւսիս (1) խառն աւազուտ խաւեր թողին որք տաքութենէն հալելու աստիճանին հասնելով բիւրեղեայ կերպարան մ'առին որոնք նշանաւոր են իրենց թերթաւոր կազմուածութիւն ու փայլուն և ուղորկ տեսքովն ու կապոյտ կամ դորշ գոյնովը, և կը կոչվին հերձ (schiste):

Այն ժամանակին մէջ դեռ երկիր պատած էր անդրնդախոր ծովերով, և այն ծովերուն տակ կային վերոյիշեալ նիւթերը: Ասդիս անդին կրանիդեայ լեռներ իրենց սոյրասուր գագաթները ծովէն դուրս կը հանէ-

(1) Գիւտիս խառնուրդը ընդանալան նիւթերէ բաղադրուած էր:

ին և ընդարձակ արշիպէլ մը կը ձեւացնէին: Բայց երկիրս երկար ժամանակ չը մնաց այս վիճակիս մէջ: Եւր վըստ պատած կեղեւը դեռ այնչափ կարծր չ'էր որ կարենար դիմանալ իւր ծոցը գտված լոյծ մարմիններուն ահագին ալեաց բախմանը. ուստի ընականօրէն զարհուրելի պառակտումներ տեղի ունեցան և անոնց մէջէն լոյծ մեաղներ դուրս վիժեցին. այն նորակազմ լեռինք ու կղզիք իրենց տակ բացված անդրնդոց մէջ գահաւիժեցան, և այն միջոցին ծովին յատակի հողերը վեր ժայթքելով՝ նոր կղզիներ դուրս տուին որք այս անգամ լոկ կրանիդեայ չ'էին, այլ այն կրանիդին վըստ կը կրէին նաեւ նախակազմ օվկիանին յատակը ձեւացած այն հերձային սպառաժներու խաւերը:

Այս կերպով ծովերուն յատակը վերստին փոխվելով՝ ասորեր նիւթեր նստան հսն որոնք դարձեալ այլ և այլ կողմ հերձային ձեւն առին ու որոնք (1) գարձան որք նշանաւոր են իրենց կանաչ գոյնովը: Այս հանգրստեան ժամանակին ալ երկար չը

(1) Թերթուր տար էր:

տեւեց: Նորանոր պառակտութիւնք մի
և նոյն պատճառներով տեղի ունե-
ցան ու ծովերուն յատակը ձեւացած
այն նոր երկիրներէն կոչուեալ վեր հա-
նեցին որով նոր կողիներ ձեւացան.
այս կողիք երեք կարգ խաւ կը պա-
րունակէին իրենց վրայ. վերեւը՝ նոր
ձեւացած կանաչ արտուազը, անոր
տակ՝ առաջին հերձոյին խաւը ու
եւտքէն կրանիդը:

Այն ատեն առաջին անգամ տեղ
տեղ ջուրերը կրեղէն (calcaire) նիւ-
թեր սկսան զետեղել. որոնք միւս նիւ-
թերէն նուազ ծանր ըլլալով՝ անոնց-
մէ ետքը նստան: Այս կրեղէնը՝ որ
Անկլիոյ կալ գաւառին մէկ լճին մէջ
առատօրէն գտնուին համար լճին
անուամբը Պալաի կրեղէն կրկաչի,
ինքն ալ ստորերկրեայ ցնցմամբ մը
վեր պորտկաց այն սիկային ժայռե-
րով հանդերձ որոց վրայ նստած էր:

Հոս պէտք է խոստովանինք թէ այս
զարմանալի եղելութիւնք մեր աչաց
պարզօղն եղաւ Քռանսացի Էլի տը
Պոմօն ժամանակակից հռչակաւոր
բնագետը որ նախ ինք կրցաւ կար-
գալ երկրագնտիս պատմութեան այս
սկզբնական էջերը, և ի լոյս հանեց զա-
նի իւր խորալինն դիտողութեամբը:

Այն քարային խաւերն որով ձեւա-
ցած են լեռները՝ գրեթէ ամէնքն ալ
բաց ի կրանիդէն ու պորփիւրէն՝ ծո-
վային խեցիներ կը պարունակեն իրենց
մէջ. սակէ կը հետեւի թէ այդ լեռ-
ները ծովին տակ ձեւացած ու ծովէն
դուրս ելած են: Ո՛ր և է նիւթ մը
որ ծովին յատակը կը նստի, հարկաւ
հորիզօնական ուղղութիւն մը կ'առ-
նու. արդ պէտք էր որ այդ լեռանց
խաւերը հորիզօնական դիրքով վրայէ
վրայ կեցած ըլլային, բայց կը տես-
նենք թէ բնաւ այնպէս չ'է, այլ մէկ
կողմէն վեր ելած ու միւս կողմէն վար
ծաւած են: Ասոր պատճառն ալ ուրիշ
ի՛նչ կրնայ ըլլալ եթէ ոչ ահագին
ցնցումներ որ երկրիս կեղեւը մէկ կամ
միւս կողմէն վեր բարձրացնելով՝ ա-
նոր վրայի խաւերուն հորիզօնական
դերքը խախտած են: Տեսնենք այս
ըսածներնուս ապացոյցը:

Եթէ կրանիդեայ ապտամծի մը
վրայ՝ միշտ մի և նոյն կարգով ու մի և
նոյն շեղութեամբ գտնէինք նախ կա-
պոյտ հերձերը, յետոյ կանաչ ար-
տուազները, յետոյ Պալաի կրեղէնը՝
իրարու զուգահաւասար դիրքով,
հարկաւ տ'ըտէինք թէ այս երեք խա-
ւերը մէկ ցնցմամբ միանգամայն խախ-

տած են իրենց սւղղութենէն. սակայն
շատ քիչ տեղ ասոնք այս կարգով կը
գտովին. շատ տեղ կը նայիս որ ասոնց-
մէ մէկը կամ միւսը պակաս է. երբեմն
մէկը միայն կայ եւ միւսները բնաւ չը
կան. ասկէ կը հետեւի ուրեմն թէ
քանի մ'անգամ հետը հետէ այդ մըղ-
մունքը տեղի ունեցած են:

Ուր կը նայիս որ մի միայն կապոյտ
հերձ կոյ, կը հասկնաս որ այս խաւը
ձեւանալուն պէս կրանիդը վեր բարձ-
րացած է: Երբ սոյն կապոյտ հերձին
տակ կը գտնես կանաչ արտուազը, կը
հետեւցնես թէ երկար ժամանակէ
ետքը այդ վերելումը տեղի ունեցած
է, այսինքն այդ երկրորդ խաւին ձե-
ւանալէն ետքը: Իսկ ուր որ այդ ե-
րէք խաւերը միանգամայն կը գտովին,
յայտնի նշան է թէ երրորդ ցնցում
մ'ալ պատահած է, բայց նախընթա-
ցէն խիստ շատ ժամանակ ետքը, այ-
սինքն երրորդ խաւին կազմութենէն
ետքը:

Արդ պէտք է գիտնալ հիմա թէ
ի՞նչպէս եղած է որ երկրորդ կամ եր-
րորդ խաւ մը անմիջապէս եկած կրա-
նիդին վրայ հեծած է. ասոր ալ մեկ-
նութիւնը շատ պարզ է: Ըսինք թէ
երկիրս առաջ ընդարձակ ծով մըն էր

ու միայն անդիս անդին կրանիդեոյ
լեռներ դըւելին ծովէն վեր կը հա-
նէին. հաւանելի է թէ այդ խաւերէն
երկրորդը կամ երրորդը ծովին յատա-
կը նստելու վրայ եղած ատենը՝ պա-
տահմամը մը սոյն կրանիդեոյ կղզի-
ներէն մէկը որոյ գագաթը դեռ ըն-
դունած չէր բնաւ խաւ մը, յանկարծ
ծովին տակ ընկղմած ըլլայ ու նոյն
միջոցին ծովին յատակը նստող խա-
ւին ինքն ալ մասնակցի ու ետքէն
նոր մղմամբ մը վեր ելլէ:

Կապոյտ հերձերը Պրթանիոյ մէջ կը
գտովին. տեղ տեղ ալ Ֆինիթէրի ու
Վանտէի մէջ. հետեւաբար կրնա՞ք
ըսել թէ այս երկիրները Եւրոպոյ ա-
մենէն հիններն են ու հաւանօրէն հա-
մայն աշխարհի Սակոյն սյս հողին
մէկ քանի հետքը Անկիոյ կուսպեր-
լանտ նահանգին մէջ ալ գտվելով՝
կոմբոյն հող կոչված են:

Կանաչ արտուազները գրեթէ միայն
կալ գաւառին մէջ կը գտովին ուր կոյ
նաւ. Պալաի կրեղէնը որոյ քանի մը
հետքը տեսված են նաև հիւսիսային
Ամերիկայ մէջ:

ՍԵՒՐԷՆԻ Ե ՏԵԼՆԷՆԻ ՀԳԷՎ

Նախընթաց յօդուածին մէջ նկարագրեալ ժամանակէն ետքը՝ հանդարտութիւնը տիրեց երկրիս վրայ, ապիսանդին նօսք մացառներ սկսան երեւիլ կղզեաց խոնաւ հողերուն վրայ։ քանի մը ծովային բոյսեր սկսան ծրփալ ջրոց մէջ և քանի մը խեցիներ ու կենդանաբոյսներ առաջին անգամ յերեւան եկան։ Ասոնց ապացոյցը սոյն ծովային կենդանեաց կմտններն են որ ցայսօր մնացած են Պալտի կըրեղինաց մէջ։

Բնութեան առաջին կենսաւոր էակները կը սեպվին լուերն ու մամուռները, կենդանատուկները, թռչնատղուներն ու անդլուխ խղունջները որոց նմանը բնաւ չը կայ հիմա մեր ծովերուն մէջ և որք բարբոսին աներեւոյթ եղած են և ուրիշ տեսակ արարածներ յաջորդած են անոնց։

Այն ծովին մէջ որոյ թէպէտ ջերմութիւնը շատ նուազած էր բայց և այնպէս տակաւին սաստիկ տաք էր, նոր սիկեր կը նստէին (Իե՛նի, Իե՛նի ու Բո՛տֆիներ⁽¹⁾) որք բնականապէս ծո-

(1) Չանգան ասպիւս իւրեր։

վայտակ հոսանքներէ փշրած բեկորներէ ձեւացած են, որոնք նախորդ հողերուն վեր ելած ատեն՝ անոնց վերայէն թօթափած էին. ասոնցմէ զատ սեւ հերձեր ալ կը տեսվին որոց բերեղեայ կազմութիւնը կ'ապացուցնէ թէ սոյն պատակումանց մէջէն ժայթքած հրաձոյլ նիւթերէն հաղորդեալ են. նոյնպէս և քանի մը կըրային խաւեր՝ որք կենդանական նըշխարներ կը պարունակեն իրենց մէջ։ Ահա ասոնք են երկրորդ եղանակին մէջ նստած խաւերուն տարբերքը, և ասոնք ալ նոր մղմամբ մը վեր վազելով նոր կղզիներ ձեւացուցին և կամ արդէն ձեւացածները իրենց հետ միացուցին։

Այս կղզեացմէ մեծագոյն մաս մը գեոպոս կան, որոցմէ շատերը խիստ հեռու են ծովէն, ինչու որ ետքէն անոնց յատակէն ուրիշ երկիրներ ելած և քովընտի ջուրերը լցնելով ցամաք երկիր կազմած են։ Այս կղզիները մեծ տարածութիւն մը կը բռնեն կալ գաւառին մէջ, որոց վաղեմի բնակիչքը Սիլուբեանք կը կոչվէին և այս անունէն նոյն հողը Սեւրէն կոչված է։ Այս հողն է որ կը ծածկէ Ծռանասյ մէջ Ծինիսթէր, Իլտը

-Վիլէն, Մայէն, Օռն և Մանչ գաւառաց մէյմէկ մասը: Նաեւ այս հողին կը վերաբերին Արաէնեանց, Պօժօյէ ու Ֆօրէզ լեռանց մէկ մասը, Լիմուզէնի գանազան կնէսները և Օտի մէջ Սեւ լեռին քանի մը հերձերը: Սիլուբեան հողերը կը գտնուին նաեւ Անկլիոյ, Սկոտլանդի, Հարցի, Պօժէմիոյ, Ֆինլանտայ և մինչև Լարոնիոյ մէջ:

Այս հողը ինչպէս որ կ'երեւի, կուսմբային հողէն շատ աւելի տարածված է: Ասկէ ետքը ձեւացածներն ալ հետք չեան նոյն համեմատութիւնն ունին. յաջորդը միշտ նախորդէն շատ աւելի տեղ բռնած է, և ասոր պատճառն ալ յայանի է. որովհետեւ երկիրս երթալով կը պաղէր, հարկաւ ետքէն ձեւացած հողերը նուազ ենթակայ բլլալով այն ահագին պառակտմանց՝ նուազ կը կորուսնէին իրենց տեղը:

Սիլուբեան հողը յերեւան գալէն ետքը երկարատեան հանդարտութիւն մը տիրեց երկրիս վրայ, և այս միջոցիս սիլուբեան ժայռից բեկորներուն հետ բուսիսկներ և խիճեր նստան: Այս խիճերէն ոմանք անուանի են իրենց գոյնովը և կը կոչվին կորմիր Տին խիճ: Ասոնց վրայ նստան հերձեր

և կրեղէն նիւթեր:

Երբոր դարձեալ երկիրս պատրուովեյով վերստին հալած նիւթեր սկսան դուրս վիժել, այն կրեղէններն ալ հերձերուն պէս անոնց հետ խառնրվելով ու միատեղ եփվելով, իրենց կերպարանը բարձրովին փոխեցին ու շարքաբի բեկորներու նման բիւրեղային տեսք մ'առին: Ահա այս կերպով ձեւացան մարմարները որք առաջ հասարակ կրեղէններ էին, անոսր տարրերէ բաղկացեալ: Նախկին մարմարները՝ որ անմիջապէս սիլուբեան խաւերէն ետքը կու գան, կը գտնուին Ֆռանսայի մէջ, Պիրէնեանց Քամբան հովտին և Օտի մէջ:

Հասարակ կրեղէնացի մարմար փոխվելը պարզ ենթադրութիւն մը չ'է. նոյնը մենք եւս կ'ընենք մեր տարրազննական երկարանաց մէջ (laboratoire chimique): Գիմացկուն հողէ խողովակ մը փոշիացեալ կաւճով կը լցնեն, ու կաւճին մէջ պարունակեալ հողածնային ասիւրը (acide carbonique) ամբողջ դուրս հանելէն ետքը՝ ծայրերէն կը գոցեն ու սաստիկ կրակի մը վրայ կը դնեն: Խողովակը պաղելէն ետքը՝ կը նայիս որ մէջի կաւիճը մարմարի յատկութիւնքն ու կերպարանն առեր

է: Այս կարեւոր փորձն առաջին ան-
գամ բնօղն է Սրբ ձէյմ Հօլ սկով-
տացի տարրադիւնը:

Մինչդեռ մէկ դիէն ծովերուն խո-
րը քանի մը կետերուն վրայ այս յե-
ղափոխութիւնքը տեղի կ'ունենային,
միւս կողմէ ալ ջուրերը ծնունդ կու-
տային զանազան տեսակ ծովային
բուսոց, լուերու և փոկոսներու աւելի
մեծ քանակութեամբ քան նախըն-
թաց եղանակիները: Կղզեաց բոլոր-
տիքը ծլօղ նորածին եղէգներն ու
կնիւնները մշտայոյզ ծովի մը պիւրնե-
րէն արմատախիլ ըլլալով կ'երթային
կը միանային այն լուերուն, և յետոյ
ծովին տակ նոր ճեղքեր բացվելով և
դարձեալ հրաձոյլ նիւթեր վիժելով,
անոնց ջերմութեան ու ծանրութեան
տակ կ'ածխանային ու կ'ըլլային վա-
ռելի նիւթեր որք *anthra-*
cite) կը կոչվին:

Այս նիւթը երբեք մեծ կոյտերով
կը գտվի, երբեմն կտոր կտոր և եր-
բեմն ալ հօղի պէս փշրած. գլխաւոր
հանքերն են Մայէնի և Սարթի մէջ,
նաև կը գտվի Պուսկօյի և Թարար
լեբին մէջ:

Մինչդեռ ծովերուն յնտակը կը ձե-
ւանային այս երկիրները որ խիստ

տարածված են Անկլիոյ Տէվոնսայր
գաւառին մէջ և որոյ համար Տէվոն-
եան հողք կոչված են, քանի մը նոր
տեսակ խեցիներ և կենդանաբոյսներ
յերեւան եկան և առաջնոց թիւն
աւելցուցին: Երկիրս առատօրէն բոյ-
սեր սկսաւ գուրս հանել իր ծոցէն.
կղզիք ծածկեցան հսկայածեւ կնիւն-
ներով որոց բարձրութիւնը կը հաւ-
սարէր մեր անտառաց ծառերուն. և
կերպարանը վարսալից նման մեր ձի-
արաչից և կակուղ որպէս բամպակ.
ատոնց հետ մէկտեղ երեւեցան նաև
պլքանի մը խէժային ծառեր: Բոլոր
այս տունկերը՝ որ դեռ բուսական
սեւին ստորնագոյնքն են, պոք ջերմ
ու խոնաւ երկրիս վրայ այնպիսի ա-
ռատութեամբ մը տարածվեցան որ
արդի խիտախիտ անտառները չեն
կրնար և ոչ գաղափար մը տալ:

Երկար ժամանակէ մ'ետքը որոյ
տեւողութիւնն և ոչ իսկ ենթադրու-
թեամբ կրնանք որոշել, բնութիւնը՝
հաւատարիմ միշտ իր օրինաց՝ նորա-
նոր ճայթումներով պատուեց վերստին
այս թերակատար երկիրս, և դարձ-
եալ ծովին տակէն վեր մղեալ դուրս
պորակացին այն տէվոնեան հողերն
որ նախորդ խաւերէն վեր կը գտվին

և կը պատեն ըզհամայն Պրբմանիտ
որ ամէն երկիրներէն հինն է և որ
նախնական կազմութեանց թանգա-
րանք կրնայ սեպվիլ: Սոյն հողերն են
որ կը պատեն նաև զԱնկիտ մեծ մա-
սամբ, ֆորնուայէն մինչև կրամբ-
եան լեռները, և Սկոտիոյ մէջ մին-
չև Շէթլընտ կղզիները, Ծռանսոյ
մէջ՝ Վոթերու հարաւային կողմը,
Լոգեռի և Քուէլի մէջ, և Պուլոնեի
քանի մը կետերուն վրայ: Պէլժիբոյ
մէջ Ավենէն մինչև Լիէժ: Կը դովի
նաև ի Պոհէմիա, ի Սաքս, յԱմբրիկ,
Ալէկանի լեռանց կողմը և մինչև հա-
րաւային ասիոյ մէջ: Սոյն այս հողերն
են որ կը պատեն Սկանտինավեան ամ-
բողջ թերակղզին, որ կը կազմէ Քուբ-
լանտ դաւառը և որ Սիպերիոյ ա-
նապատներէն անցնելով կ'երկրնան
մինչև Ալտային լեռները:

Մարդկային միտքը կը ցնորի երե-
ւակայելով զայն ահայոր տեսարան-
ներն որ կը պատահէին այն ժամանակ-
ները. հրաշէկ կրանիդէ լեռներ յան-
կանձ յանկտրձ կը բարձրանային ան-
դրնդոց մէջէն և բարդ ի բարդ թանձ-
րամած շոգիներ կը հանէին օդոյն մէջ
որ կը թնդար զարհուրելի ճայթում-
ներով: Եւ այցելալ ջրոց սիւներ յան-

հունս կը բարձրանային ի վեր, խիտ.
ախիտ ամպեր կը մթագնէին զերկին
և աղձամղջին գիշեր կը սիւռէին յեր-
կիր: Յայանի է թէ ծովին այն մա-
սանց մէջ ուր այս քստմնելի տեսա-
րանք տեղի կ'ունենային, ոչ կենդանի
կը մնար և ոչ բոյս. ահա ասոր համար
է որ մէկ եղանակի մէջ գոյացած ա-
ռարկաները յաջորդ եղանակին մէջ
բոլորովին անյայտ եղած են:

ՁՈՐՐՈՐԴ ԵՂԱՆԱԿ

Ածիւնն հուռ.

Տեսինք թէ ամեն անգամ որ ծովին
տակէն երկիր մը վեր կ'ելլէր, ջուրէն
անոր գազաթէն հեղեղի պէս վար
հոսելով՝ կտորներ կը փրցնէին անոր
վրայէն որք փոշիացեալ կ'իջնէին ծո-
վին յատակը կը զետեղվէին: Երբ տե-
վանեան երկիրներն ալ ջուրէն վեր
պորտկացին, ասոնց վերին խաւերը
կրեղէն ըլլալով անոնց վրայէն վա-
ղող հեղեղները սոյն նիւթն առին քր-
շեցին մինչև ի ծով և հոն ձեւացու-
ցին կրածխային խաւեր, որոնք խառ-
նրվելով անթրակիտի հատիկներուն՝
միխրի դոյն առին ու հանքածխային
կրեղէն կը կոչվին: Այս կրեղէնը

Թեթեւ ըլլալուն համար երկար ժամանակ ծփուն մնաց ջուրերուն մէջ ուր նորանոր կենդանիք ու բոյսեր սկսեցին գոյանալ որոց քարացեալ նշխարքք կեցած են սոյն կրեղէնին մէջ: Այս կենդանիքը միայն խղունջ ու բիւրոտանի չ'էին. ժամանակն եկած էր որ ջրոց արգանդէն դուրս ելլէ այն կենդանեաց նախատիպը որ յետոյ երկրիս մինչեւ այն ատեն անբնակ մնացած հաստատուն մասանց բնակիչքը տ'ըլլային: Ահա սոյն ատեն կեանք առին վեշապաձրկունք՝ կիսով սողուն ու կիսով ձուկ, երկու մասամբ ալ անկատար, բայց և այնպէս կենդանական ազգը երկու գլխաւոր ցեղերու բաժնեցին, երկրային ու ծովային:

Այս տեսակ կենդանեաց ոսկրոտին ու բրածոյքը առատօրէն կը գտնուին տէվոնեան հողերէն անմիջապէս ետքը եկող կրեղէնին մէջ: Այս կրեղէնը՝ որ լի է խեցեօք և բիւրոտանեաց բեկորներով, տեղ տեղ տեսակ մը մարմարի փոխված է որում վաճառականք հետեւեալ անունները տուած են. Տիւննայ սեւ մարմար, սուրբ Աննայի մարմար ու Սկովտեան քարինք: Պէտքայէն կ'ելլեն այս քարերը:

Տէվոնեան հողերէն այս կրեղէնը անջատող հեղեղները անոնց վրայի հսկայաձեւ կնիւններն ու ձիաբաշխները մէկտեղ քաշկռտեցին ի վար, որոնք սոյն կրեղէնէն աւելի Թեթեւ ըլլալով անոնց վրայ պառկած մնացին: Ահա սոյս բոյսերն են որ ետքէն ամուխ դարձան՝ ինչ կերպով որ նախընթաց եղանակին մէջ անթրակիտները գոյացան. և եղան հանքային ամուխներ: Ասոնց բունկելէն յառաջ եկած ճայթմունքը կտարտեցին փշրեցին շրջակայ ժայռերը՝ որով խառնափրնդոր խաւերու կազմութիւն մը գոյացաւ բաղկացեալ բուտիկներէ ու միքսիտան խիճերէ, գորշագոյն կամ դեղնահաստ որ կը կոչվին հանքածխային խիճեր:

Ինչպէս որ ըսինք, տէվոնեան կրղղիք իրենցմէ առաջ գոյացած երկիրներէն շատ աւելի բնդարձակ էին. ասոնցմէ մէկ քանին կրնային մինչեւ անգամ մեծ ցամաքներ կոչվիլ. հարկաւ ձորեր ու գետեր կը գտնուէին անոնց մէջ քանի որ այնպիսի ճոխ բոյսերով ծածկված էին: Այս սկզբնական անոյշ ջրերը քիչ ատենէն լըցվեցան խեցիներով՝ ծովայիններէն տարբեր, որոց հիմա ամխացեալ նըշ-

խաբբը կը գտնուին առանց բնաւ նմանելու հիմնական ջրակեցիկ կենդանեաց:

Ծովերուն յատակը բարձրող նիւթերէն վեր բարձրացած գունդագունդ շողերը հեղեղային տարափներ գտնալով այն կղզեաց բարձրագոյն գագաթանց վրայ թափեցան և Տոն բուսած անտառներն արմատախիլ ընելով, անոնց բեկորները կամ ծովափանց վրայ և կամ լճերու մէջ գահաձիճեցին: Այս բեկորները միանալով գետային խեցեաց, հիմնական ամիսային հողերուն նման խաւեր ձեւացուցին և անտարակոյս այնպէս արմատային եթէ կրկին կրկին ծովին յատակը ձեղքելով պորփուրեայ նիւթեր գուրս չը վիճէին որ զանոնք ամուխ դարձուցին և անոնց վրայի կուերն ալ հերձի փոխեցին:

Այս լճերուն յատակը ձեւացած ամուխներուն մէջ հանքածխային կրեղէնը բնդ հանրապէս կը պահսի, իսկ տէփոնեան բուստինկներուն վրայ անմիջապէս կը գտնուին հանքածխային խիճը: Ուստի հանքածխային աւազանները երկուքի կրնանք բաժնել ծովային ու ցամաքային: Անկկոյ ու Պէլժիոյ հանքածուխները ծովային են,

իսկ Զոանտայինները գետային են և զուրկ ստորին կրեղէնէ:

Տէփոնեան երկիրներն յերեւան գալէն ետքը՝ բազմաթիւ դարեր երկիրս հանդստացած ըլլալու է, քանզի Պ. Էլի աը Պոմօնի հաշւին նոյեկով՝ երկրիս արդի բոլոր անտառները հարիւր տարիան մէջ հազիւ հիմնական բանված հանքածուխներուն տարածութեան վրայ 16 հիլամէդր (kylomètre) խորութեամբ կրնան խաւ մը կազմել: Եւ որովհետեւ գիտենք որ այն ատենվան բոյսերը տասն անգամ աւելի շուտ յառաջ կու գոյին, հետեւաբար հարիւր ութսուն դարի կարօտ էին 50 մեդր խորութեամբ հանքածխային խաւ մը կազմելու՝ նման Զոանտայի հարաւային կողմը գտնված խաւին: Ասկէ բաւական յայտնի կ'երեւայ թէ մեր երկիրը կարծվածէն շատ աւելի տարեւոր ու պատկառելի է եղեր:

Այս հանդարտութեան եղանակն ալ անցնելէն ետքը՝ դարձեալ նորանոր վրդովմունք ծագեցան որ զայս նորակազմ երկիրները փշրելով ու զանազան կողմ մուկելով վեր մղեցին, և ասոնք իրենց պարունակած վառելի նիւթին համար հոստոնային հող և կողմեցան. ստիպան չը կարծվի թէ այս

հողը ամեն կողմէն հաւասարապէս վեր
մղվեցաւ ու ամբողջապէս ծոզէն գուրս
վազեց. ասոր մէկ մասը դարձեալ մը-
նաց ծովին մէջ որ ետքէն զանի ծած-
կեց նոր սիկերով. ահա ասոր համար
է որ շատ անգամ այս հանքածուխ-
ներուն խաւերը անյարիր կարգով մը
կը գտվին երկրի տակ և այնքան ի
խոր որ դուրս հանելու համար պէտք
են խոր վիրապներ, կամարներ ու զո-
րաւոր մեքենաներ:

Ամեն մարդ գիտէ թէ հանքային
ածուխը սօկւոյ ու արծթի հանքերէն
տւելի հարստութիւն կը հայթայթէ,
բայց դուցէ ամէն մարդ չը գիտէ թէ
ի՞նչ տոժանելի ու վտանգաւոր աշ-
խատութեամբ ձեռք կը բերվի:

Այս հանքածխային երկիրները ի-
րենց մէջ գտված հրային նիւթոց
պայթմամբն այնքան տակն ու վրոյ
եղած ու ստեպ ճաթաւած են, ու
անոնց մէջ գոյացած անջրպետները
լցված են յետոյ օտար նիւթերով,
որ այնպէս կարծել կու տան թէ հոն
կ'աւարտի հանքածուխը: Ուստի ա-
նոր շարունակութիւնը գտնելու հա-
մար՝ բաւական չ'է միայն այդ միջին
պատուարը ծակել անցնել որ երբեմն
իհտ ստուար է, այլ նոյն իսկ այն

պատուարին ներքեւն ալ ստորերկրոյ
վրդովութիւնը պատահած ըլլալուն հա-
մար՝ այն խաւերը բոլորովին իրենց
չարքը կորուսած ու զանազան կողմ
ցրված են. ուստի կատարելապէս չը-
մուտ ու փորձառու մարդիկ կորոզ
են միայն անոնց հետքերը գտնել:

Բաց այս պատուարներէն՝ հանքա-
յին ածուխ հանողները երկու մա-
հաբեր թշնամիք ալ ունին, հուր և
ջուր: Երկրի խորը մեծ մեծ լճեր կը
գտվին որ միշտ տարածվիլ ու բն-
դարձիլ կ'ուզեն, ու կու գան երբեմն
կ'ողողեն աշխատաւորաց գեանասը-
րահները: Երբեմն ալ անխաւոր ջրա-
ծին կազը՝ հանքածխին հերձուած-
ներէն դուրս ցոյտելով՝ շրնչասպառ-
կ'ընէ խեղճ բանվորները և կամ բը-
ռնկելով ահագին ծայթուսներ կը
պատճառէ որք այդ ստորերկրոյ կա-
մարները գողգեղով՝ քարեղէն տարա-
փի մը տակ սուղեալ կը թաղեն զայն
խեղճերը: Կը պատահի նաեւ երբեմն
որ կրակը ամէն զգուշութիւն ի դե-
րեւ հանելով՝ հետքհետէ կը հաղոր-
գի բոլոր անխային հանքին. ասոր
առջեւն առնելու ուրիշ միջոց չը կայ
բայց եթէ անմիջապէս խցել ամէն
ձեղքերը և կրակն ինքնիրեն թողուլ

որ օր չ'առնելով մարի:

Անկլիա և Պէլժիա ամեն երկիրնե-
րէն աւելի հարուստ են հանքածը-
խով: Շատ հաւանելի է թէ րյս եր-
կիրներուն հանքածուխները մի և նոյն
շարունակութիւնն եղած ըլլան ու յե-
տոյ այլ և այլ յեղափոխութիւնք
զԱնկլիա Եւրոպայէ զատած ըլլան:
Նաեւ շատ հաւանելի է թէ Պէլժիոյ
հանքածուխները որ Ֆուանսայի մէջ
ուռինն իրենց ճիւղերը դէպ ի Անգլէն
ու Վալանսիէն, մինչեւ ի Պուլժոյնը,
ծովին տակէն անցնելով միացած ըլ-
լան Անկլիոյ հանքածուխներուն: Այս
երկու երկիրներէն ետքը Ֆուանսա է
ամենէն հարուստը հանքածխի կողմէ
որոյ գլխաւոր շտեմարանքն են Սէնթ-
Էլթիէն, Ռիվ-տը-ժիէ, Ավէյրօն, Քը-
րէօղօ, Ալէ ու Վալանսիէն:

Հանքածուխներու ուսումը ոչ միայն
երկրաբանի մը՝ այլ և ամեն իմաստա-
սէր անձանց հաճոյական զբաղումն
է: Ասոնց մէջէն երբեմն կ'ոճղեր կ'ել-
լին այնպէս աղէկ պահված որ բնա-
գէտը կրնայ իսկոյն գիտնալ ո՛ր դա-
սէն ու քանի՛ տարեկան ըլլալը: Կան
հերձեր որ իրենց վրայ կը կրեն նախ-
նական տերեւներու զբօշմներ, ասոնց-
մէ զատ ուրիշ քարերու և մետաղնե-

րու մէջ այնպիսի կենդանեաց հետքեր
կը նշմարվին որ առաջին մարդէն հա-
զարաւոր դարեր առաջ կ'ապրէին.
այսպիսի հնութեանց քով երեկվան ե-
րախաներ են Եգիպտայ բուրգերը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ԵՂԱՆԱԿ

ԱՆԲԵՐԷ և ԵՐՐՈՒՄ հող.

Երկիրս վերոյիշեալ վիճակն առնե-
լէն ետքը՝ դարձեալ իւր հանգստեան
ժամանակն ունեցաւ և այս միջոցիս
ծովին տակ սխաւ նստիլ կարմիր խիճ
մը տարբեր միւս հին խիճերէն որ տե-
վանեան կազմութեան ժամանակ ձե-
ւացաւ, նոյնպէս և քանի մը հերձեր
որ նշանաւոր են իրենց մէջ եղած
պղնձային երակներով ու վերջապէս
կրեղէն խաւեր: Մինչդեռ այս հողս
որ Անբերբի կամ՝ ամուլ (pénée)
կը կոչվի, ջրոց տակ զետեղելու վը-
րայ էր, զանազան կենդանիք կը գո-
յանային այն ջրասոյղ երկիրներուն
վրայ որ մինչեւ այն ատեն անբնակ
էին: Այս կենդանեաց առաջինքն ե-
ղան երկակենցաղք (amphibie): Անոր
համար է որ այս եղանակին հողոց
մէջէն կէս մը կոկորդիլոսի և կէս մը
մողեսի ձեւ ունեցող կենդանեաց նըշ-

խարք կը գտվին որոց աղբը բնաջինջ եղած է: Ասոնց ժամանակակից են նորանոր խեցիք որք միայն այս հոգոյս մէջ գտվելովնն է որ ծանօթ են մեզի: Նոյնպէս ձուկեր՝ գրեթէ արգի թառափներու (esturgeon) նըման որոց կատարելագոյն դարձարանք կը յայտնեն թէ որչափ յառաջագիմուծիւն ըրած է բնութիւնը: Կեանքի թէ Անբերրի խաւերը գոյացնող գեանապատառ ճոյթումներն այնքան ահաւոր ու երկարատեւ եղած չ'են: Այս փոթորիկն ալ անցնելէն անմիջապէս ետքը՝ ծովածուփ տարերքն սկսան վերըստին յատակն իջնիլ ու խաւեր գոյացնել:

Այս խաւերն երեք կտրգի կը վերածին և անոր համար երբեք (triasique) կոչված են: Նախ խոյտաբղէտ (bigarré) խաւեր՝ սփորաբար մոխրաբոյն և երբեմն դեղնորակ, կարմիր, վարդագոյն կամ կապոյտ գծերով որ շատ օգուտ կ'ընծայեն շէնքերու, զի ասոնցմէ կը բաղկանան շատ գունաւոր նիւթեր. երկրորդ խեցոյին (conchylien) կրեղէններ՝ բոլորովին խեցեղինօք բաղկացեալ, և երրորդ՝ երփնագոյն մառն (marnes irisées) բաղադրեալ մառնոյին կրեղէնէ:

խառն կանաչ կամ կապոյտ կաւով: խոյտաբղէտ խաւերն ու երփնագոյն մառնները ստեղծ կը պարունակեն շատ մը բուռ (gypse) կամ գած, աղուձակ (selgemme) կամ ծովօլոյին աղ, որոց գոյութեան պատճառը հետեւեալ կերպով կը բացատրվի: Ածխաբեր և անբերրի հողոց քանի մը մասունքը կոնաձեւ վեր մղվելով՝ ազի ջրոց լճեր ձեւացուցին որ քիչ ատենէն չորնալով արեւին ջերմութեամբ՝ մեծամեծ խաւեր կազմեցին ազի: Յետոյ այն կղզիները կործանելով այն աղերուն վրոյ՝ իրենց վերաաակաց վրոյ ալ երրակի խաւերն եկան անդաւորեցան: Այն ատեն ծովայատակ աղբիւրներ՝ նման արգի արգէզեան հորերուն՝ այդ աղոյին խաւերուն մէջէն անցնելով ու յղժանալով (saturé) երրակի հողն ալ միւսներուն պէս քայքայելով վեր մղվեցաւ՝ անոր ճեղքերէն ջուրը սկսեալով շոգիանալ՝ երփնագոյն խիճերու կամ մառններու աղէ խաւեր ձգեց որ յարդ կը գտվին:

Այս աղոյին ջրերը կիզակաւուտ (tourbeux) խաւերուն մէջէն անցած ատենին՝ իրենց աղերուն ծծումբ պարունակող մասը, որ է սուսայի ծը-

ճըմբուտը (sulfate de soude) դանէն
(tanin) բազած բուսային ստիտներէ
լուծվելով կը բեռնաւորվին ծծըմբա-
յին ասիտով (acide sulfurique) և
խեցային կրեղէնաց կայլակմամբ (suinte-
ment) շաղվելով, դաճ կը դառնան
որ ուրիշ բան չէ բայց կ՛թէ կիր բա-
ղակցեալ (combiné) ծծըմբային ասի-
տով: Ասկէ յայտնի է թէ ինչու տղի
և բուռնի խաւերը յաճախ ի միասին
կը դառնին:

Խեցային կրեղէնը՝ բաց իւր եղա-
նակին յարմար շատ մը խեցիներէ՝ կը
պարսւնակէ նաեւ սամոնական կոչ-
ված խեցիներ: Այս անունը տրված
է Եգիպտացուց Ամօն շաստուածին
անունէն զոր խոյի եղջիւրներով կը
նկարէին՝ որոց ձեւն ունին այն խե-
ցիները: Ասանք նշանաւոր են իրենց
տոյլ և տոյլ հասակներով. կան որ խիստ
մանր են և կան ալ որ մէկ մեգր տը-
րամագիծ ունին: Հիմակվան ծովե-
րուն մէջ շատ քիչ կան այս տեսակ
խեցիներ, մինչդեռ կ'երեւի թէ այն
ատեն խիստ քաղմութիւ են եղեր:
Ասոնց մէկ տեսակը մնացած է միայն
Նուսորդ կոչված՝ գաղտակուրեայ սի-
րուն խեցի մը, որ նաւակի նման կը
ծփայ ալեաց վրայ և մէջի կենդանին

իւր երկայն թեւերը դուրս ձկտելով
ղեկի ու առագաստի տեղ կը դործա-
ծէ զանոնք և փորրիկ վասնդ մը տե-
սածին պէս խեղոյն ետ կը քաշէ. իսկ
երբ որսորդ ծովային թռչուն մը տես-
նէ՝ անմիջապէս ծովին տակ կը խո-
րատուղէ իւր շողշողուն մակղկը:

Ահագին երկկենցաղ մողէսներէ ու
ձուկերէ զատ՝ երբակի հողը կը պա-
րունակէ նաեւ հսկավիթխար գոր-
տերու ոսկրոտիք որ շատ տարբեր են
մեղի ծանօթներէն: Ասոնցմէ առաջ
գտված կենդանիք անձայն էին. ա-
սոնք եղան բնութեան առաջին երա-
ժիշտք որ այն թերակատար աշխար-
հին յերանց ու ձորոց արձագանդն
տրթընցուցին իրենց խալոտ եղա-
նակով:

Խայտարղէտ խիճերը, երփնագոյն
մառներն ու խեցային կրեղէնները կը
գտվին (ոչ միշտ միատեղ զի շատ
անգամ՝ ասոնցմէ մէկը կը պակտի) ի
Լօթ, յԱվէյոսօն, ի Թառնէ-Կառօն,
ի Շէռ, յԱլիէ և ի Վօօփ:

Այս նոր հողոյն խաւերն ալ կա-
տարեկապէս նստելէն ետքը՝ ասոնք
ալ իրենց նախորդաց պէս վեր ելան
ջրերէն ու նոր ցամաքներ աւելցուցին:

Ժեբարայիտն հոգի:

Երբակի հոգերը կազմվելեն ետ-
քը՝ երկրադնտին մակերևոյթը ըս-
տրովին կերպարանափոխ կդառնա: Թո-
ղունք մենք հիմն աշխարհէս միւս
մասերը որ այնչափ զննված չեն և
նայինք թէ նոյն ատեն արեւմտեան
Եւրոպ ի՞նչ վիճակի մէջ էր:

Եւրոպայ այս կողմն այն ատեն՝
բաց ի հոյլ ի հոյլ կզղեակններէ՝ ունէր
չորս մեծ ցամաք. արեւմտեան կող-
մէն՝ Պարթանիա, որ այն ատեն Սնկ-
կոյ և Իռլանդայ կից էր. հիւսիսէն՝
Շվեդ ու Նորվեժ. արեւելքէն՝ Տիւն-
քերք, Լէյտսիք, Քրաքովի, Սլոնա-
պուրի, Յուրիք ու Ռալմիտոյնի մէջ
տեղերը ընկած երկիրները. վերջապէս
հարաւէն՝ Գաւանայ կեդրոնական հո-
ղակոշտ երկիրը յորում կը գտվին
Օվէսն ու Առտէշի, Լոզէսի, Ավէյ-
ոսնի և Քոսեզի նահանգաց մէկ մասը:

Այն երկիրները որոց վրայ կը
բարձրանան Բարիզ, Լոնտոն, Հոսթ,
Մաարիա, Նարոլի ու Պեդլին տա-
կաւին ծնած չէին: Այգեան ու Պի-
րէնեան լեբինք զեւ անդրեդոց յա-
տակը կը հանդէշին, բաց ի Քանդալ

լեանէն և Վոժից մէկ մասէն:

Ապա նորանոր երկիրներ հետքհե-
տէ ծովերէն կըլելով այդ վիճակի մէջ
չըթողին զԵւրոպա, որք են Ժիւրա-
թօթ ա՛՛Սոն և Մօսկան լերէնք որք
միջին ծովերէն կըլելով՝ փոխանակ
չորս մեծ ցամաքի՝ երկու մեծազոյն
ցամաքի վերածեցին զԵւրոպա, որք
են Սքանտինավիա՝ որ հիւսիսէն գը-
րեթէ ընաւ փոփոխութիւն չը կրեց,
ու լայնատիրու մահակածեւ ցամաք
մը որոց գաղաթն էր դէպ ի Քեոսիւ-
եան, և երկու ծայրերէն մէկը կը
յանդէք ի ծագս Սիովոնոյ և միւսն
ի Քրաքովիա:

Երբակի հոգոյն վերամբարձմամբն
այս մեծամեծ ցամաքները յերեւան
գալին ետքը՝ երկրիս վրայ տիրած
հանգստութիւնն աւելի երկարա-
տեւ եղած է քան զառաջինս: Այն
ատեն ջրոց յատակը բազմաթիւ սի-
կային խաւեր նստան որ կոչվեցան
Ժիւրայեան հոգք, վասն զի գլխաւո-
րապէս այս խաւերով ձեւացած են
Ժիւրա լեբինք:

Այս հոգերն երկու կարգ կը բաժ-
նըվին. մէկը Վաս (lias) կոչված և միւ-
սը ճաւառայ (oolithe): Ինաս հոգն եր-
բեմն խառն կըլլոյ խեցեկեց կրեղի-

նօք ու երբեմն ալ տեսակ մ'աւա-
զով որ ուրիշ հողոց մէջ խիստ քիչ կը
գաղի, և դիտված է թէ երբ լոյծ
մարմին մը անոր մէջէն անցած է՝
միշտ այնպէս մը փոխած է անոր երե-
ւոյթն ու կազմութիւնն. որ երկրա-
բանք երկար ատեն խափված ուրիշ
նիւթ մը կարծած էին զանի: Այս
հողոյն վրայ կը պատէ տեսակ մը կը-
րեղէն՝ լի նիզակայտի (bélemnite) ըս-
ված կենդանեօք որ երկու ծայրերէն
ուռած փոքր գլանիկի մը ձևն ու-
նին. հաւանելի է թէ ատնք արդի
«շեիչ» (seiche) ցեղէն ըլլան. վասնզի
այս ձուկերը թշնամիէ մը հալածված
ատեննին՝ ետեւներնէն սեւ հեղուկ
մը գուրս կը թափեն որ ծովին ջուրը
պղտորելով զիրենք անտես կ'ընէ: Այս
կենդանիք տաղբակ մ'ունին իրենց
մարմնին մէջ ոյն հեղուկը պահելու
համար, զոր պատկերհանք «էֆե» կ'ան-
ուանեն և իրենց նկարներուն կը գոր-
ծածեն: Այդ վերոյիշեալ կրեղինաց
մէջէն՝ ահա ասանկ չորցած սէրիա-
յի տաղբակներ կ'ըլլին որ ջրոյ մէջ
թորջվելով քաֆէի գեղեցիկ գոյն մը
կու տան: Զարմանալի չէ՞ որ բնու-
թիւնը մարդոյս ստեղծումէն բազմա-
թիւ դարեր առաջ պատրաստած ըլ-

լայ զանոր պիտոյքը:

Զուաքարը լիստէն՝ կը տարբերի
մառնի և աւաղի խաւերով որ ձկն-
կիթի (պլաթ էստրիա) նման կ'որ
հատիկներով ձեւացած է: Այս հո-
ղոյս վրայ կան դարձեալ կաւի խա-
ւեր որ Օքսֆորտի կաւ կը կոչվին.
դարձեալ ասոնց վրայ ալ կայ կրեղէն
մը լի բազմաանեօք, բուստերով, կա-
ւերով ու քանի մը մառնի ու երբեմն
ձուաքարի խաւերով:

Ամեն հողերէն աւելի թիւրայեան
հողերը տարածված են երկրիս մա-
կերեւութին վրայ: Մինչեւ այս ա-
տեն գտված կենդանեաց մէջէն ա-
մենէն կատարեալները ղեռուններն
էին: Ասոնց տեսակները բազմապատ-
կեցան թիւրայեան հողք կազմու-
թեան ատեն: Լիստ հողը կը պարու-
նակէ այն ազգ կենդանեաց բազմա-
թիւ ոսկորներ, որոցմէ ոմանք եօթ
մեդրէն աւելի երկայնութիւն ունին
ու կոկորդիլոսի կը նմանին որոյ թա-
թից տեղ ունին լուղակներ կամ թի-
ակներ. կան ալ որ ձկան ձեւ ունին:
Դարձեալ կը գտվի ուրիշ ազգ կեն-
դանիք այ որ չղջիկի նման մաշկաթեւ,
թռչնոց նման վիզ, գլուխ ու մաքիլ
ունին և իրենց դաւակով ու պոչով

գրեթէ ոտնաւոր կենդանեաց կարգէն կը համարվին:

Կարծես թէ բնութիւնն այն ատեն ձիգ կը թափէր գետուններէն դէպ ի կատարելագոյն կենդանեաց անցնելու: Թռամատ կոչված կենդանիք որոց նշխարքը Ճիւրայեան հողոց մէջ կը գտվին, ասոր ապացոյց են: Այս կենդանիք երկայն վիզ, երկայն ցրտուկ, շատ մը սուր տակաւներ ու կարճ պոչ ունին. բայց ատոնց ամենէն նշանաւոր անդամը՝ առջեւի ոտից հնգերորդ մասն է որ կարգէ դուրս երկայն է: Քիւլփի: կարծիք կ'ընէ թէ այդ մտառ չղջիկ թեւի նման լոյնասփիւռ մաշկ մը կրելու համար էր որով օդոյն մէջ ալ կը թռչէր: Աստի հաւանելի է թէ ասի եղած ըլլայ առաջին թռչուն կենդանին և նախահայր ամենայն հաւուց: Իրաւ է թէ դեռ չէ գտված անանց դիւրարեկ ոսկրատին. բայց՝ երբ թէ խորհրդաւոր ձեւք մը չ'ուզելով երկրագնդիս պատմութեան տարեգիրն անյայտ բնել ապագայ սերընդոց՝ ո՛ր և է կերպով մը պահած է զանի երկրիս ծոցը, որպէս զի օր մը հանճարեղ էակ մը քրանաթոր ու համբերատար աշխատութեամբ ժամանակին անգըն-

դոց մէջէն ի լոյս հանէ զանի ի փառս Գիտութեան և Արարչագործութեան: Ասի յուսալի է զի կը տեսնենք այսօր Ճիւրայեան կահուղ խաւերուն վրայ նոյն թռչնոց դրոշմներ:

Բայց Ճիւրայեան եղանակին ամենէն նշանաւոր դէպն է ոտնա՝ որ կենդանեաց զոյացութիւնը որոց նշխարք կը գտվին ձուարքարի մասներուն մէջ: Ասոնք առաջիններն ըլլալով ամենէն թերակատարներն են, և են կրկնարդանոք (didelphie), պարկաւորք (marsupiaux) որ մանր կենդանիներ են նման Երբ Հոյանոց սարիկաց (sarigue), բայց ինչպէս որ ալ ըլլան միշտ ոտնաւոր են:

Ատոնցմէ զամ՝ Ճիւրայեան խաւերը կը պարունակեն նաեւ կէտային կենդանիք, որում կը վերբերին պալենեանք ու նոր տեսակ խեցիներ, նոյնպէս ալ արմուկներ և ուրիշ տունկեր որ նախորդ եղանակոց ձարխոաներէն շատ տարբեր են:

Ճիւրայեան հողն ալ երբակի հոգոյն պէս կը պարունակէ գամի ու ծովային ազի կոյտեր ու մանաւանդ երկաթի հանքեր որ արհեստից մեծ ճառայութիւն կ'ընծային:

Կառնային հող + սորբիտ + և վերին,
Բարդիտն հող +

Ահարկու ցնցուսներ ժիւրայեան
հողոյն մէկ մասը վեր հանելէն ետքը՝
նոր խաւեր սկսան վերստին ջրոց յա-
տակը նստիլ, որ կը բաղկանան տեղ
տեղ՝ մանաւանդ Անկլիոյ մէջ կրե-
ղէններէ, երկաթային աւազէ ու կա-
ւէ. ասոնք յառաջ եկած են ցամքած
գետերէ ինչպէս որ կը վկայեն իրենց
մէջ պարունակված անոյշ ջրոց խեցի-
ները, ու հետեւաբար մեծ տարա-
ծութիւն մը բռնած չ'են: Այս խա-
ւիս մէջ գտնուեցաւ տեսակ մը շանա-
ձուկի ակոս մը որ 23 մեզր երկայ-
նութիւն ունի: Այս խաւերը կը կոչ-
վին Ստորին կաւձային հողք:

Վերին կաւձային հողերը ձեւա-
ցած են մեծաքանակ հողային կրե-
ղէններէ ու երբեմն կաւախառն կոչ-
տերէ: Այս կրեղէնը՝ բաց ի շատ
մը սովորական խեցիներէ՝ կը պարու-
նակէ նաեւ անհուն ծակորներ (for-
minifères) այնպէս որ կարծես թէ
բոլորովին ասոնցմով է բաղկացած:
Ասոնք տեսակ մը ծովային խեցիներ

են՝ շատ մը խցիկներով՝ որոց ամե-
նէն մեծը հազիւ 2 հիւրդամեզր
(millimètre) արամագիծ ունի. այս
կենդանւոյն մինչեւ 800 տեսակը գըր-
ված է: Ո՛րչափ ահագին պէտք է որ
ըլլայ այս կենդանեաց թիւը որ 10
մեզր խորութեամբ տարածութեան
մը վրայ իրենց բեկորներովը կաւձեայ
կոյտ մը ձեւացուցած ըլլան:

Այս կաւձին վերին կողմը աւելի
կարծր է ու հատիկներն աւելի խ-
շոր, որով հասարակ կրեղէնի կը
նմանի: Ասոր մէջէն տարօրինակ ձե-
ւերով խեցիներ կ'ելլին, որոց մէկ աե-
սակը զանազան մեծութեամբ դրամ-
ներու կը նմանի՝ վրան գծահիւս զար-
դերով: Այս նիւթէս շինված են
Եգիպտոսայ բուրգերը: Ասոր մէջէն գը-
տին գանկի մը բեկորներ՝ հանգերձ
1 1/2 մեզր երկայնութեամբ ակոսոյով
մը: Բնապատումը երկար քննութեամբ
հաստատեցին թէ հսկայաձեւ կոկոր-
դիլոսի մը գլուխն է:

Այս հողերէն կ'ելլին շատ մը ծը-
ծրմբային ու երկաթային հանքեր,
նաեւ տեսակ մը թերակալմ՝ քարա-
ձուխ (lignites) որոց մէջ բուսոց փայ-
տային հիւսը (tissu ligneux) աւելի
որոշ նշմարելի է:

կաւճային հողոց վերամրարձու մը միւսներէն շատ աւելի սատարկ եղած է: Պիրէնեան, Ալպէնեան, յուլեան Ալպ, Քարբաթ և Պալքան լեռները ծովուց անդունդներէն վեր ելան ու ստիպել ջրհեղեղներ պատճառեցին:

Այս յեղափոխութեանց ալ յաջորդող հանդարտութեան ժամանակին մէջ նոր խաւեր սկսան զեռեղել ջրոց յատակը, բազկացեալ նախ մածանիկ կաւէ մը որ աղնիւ բրուտ շինելու կը գործածվի, տեսակ մը կրեղէնէ որով շինված են Բարիզի տուները, դաճէ ու կոպճային նիւթերէ որոցմով կը շինվին ջաղացից երկաններ:

Այս հողը՝ ձեւանալէն ետքը՝ ծովէն վեր ելելով գրեթէ հիմակվան Յաւնստան կազմեց որ մինչև այն ատեն կ'զամ էր Անկիոց, և ատոր համար Բաբելոն կոչված է:

Այն ատեն բուսոց ու կենդանեաց տեսակներն սկսան շատնալ: Մինչև այն ատեն երկրիս վրայ եղած կենդանիքը տակաւին ստորին կարգէ էին. իսկ այս եղանակիս մէջ՝ արևաւեհնեաց անտառներ ծածկեցին երկրագնտիս արգի բարեխառն երկիրները որ այն ատեն շատ աւելի տաք էին:

Այս եղանակիս մէջ սկսան յառաջ գալ մեր կաղնիներուն ու կնձնիներուն նման բարձրաբերձ տունկեր:

Խցիկաւոր խեցիներն ալ գրեթէ բուրրովին անյայտ եղան և անոնց յաջորդեցին բուրրովին նոր ազդ խեցիներ որոց մէկ քանի տեսակները կը դաժին դեռ այժմու ծովերուն մէջ:

Կախարդ ժամանակաց անձոնի զեռնոց յաջորդեցին արգի ափրիկեան կոկորդիլոսներու նման յաղթանդամ կենդանիներ:

Ոտնաւորաց դասն ալ՝ որմէ միմիայն կետայինք ու սարիկայինք կային, բազմապատկեցաւ ու կատարեւաջու: Բարիզի շրջակաները մեծամեծ ոտնաւորաց սակօրներ դաժեցաւ զոր Բելգիէ խորին հանճարով մը քովէ քով բերելով ամբողջ կմախինն բառ կարի վերակազմեց:

Այս հողոցս մէջ գաժեցան նաեւ իշոյխարի, ձիթափիրի նշխարներ, ու վիթխարի զեռնոց ու կրայից բեկորներ:

Կախալ Զրհեղեղեան հոգի.

Բարիգեան հողը ծովէն վեր հանող մղումը շատ տարածեալ չ'եղաւ. մի միայն Բարիզի, Լօնտօնի ու Պաիւքսէլի մէջ ամփոփված ծոցերը լցուց. բայց անդիէն Թուրէնի, Բոօվանսի, Լանկաիւքի ու նաեւ Հելլեպոլի մէկ մտար ծովին տակ ընկղմեց որոնք դարձեալ աւազի խաւերով ու խեցեղից խիճի կցաբերով ծածկվեցան:

Ասոնք են որ կախալ հող կը կոչվին գիւրաւ փշրվելուն համար. ասոնց մէջէն կ'ելլին Փիլի նման վիթխարի գորտեր, սուրբեր, կուզբեր, սկիւրներ, մինչեւ անգամ կապիկներ, ամենքն ալ հիմակվան դավածներուն բաւական կամ բոլորովին մօա: Այս հողը ծովէն վեր ելած ատենը ոչ միայն իրեն հետ Բարիզեան հողին խորխորմամբը ծովը թափած երկիրները վեր հանեց, այլ և արեւմտեան Ալպեան լեռանց գօտին կաղմեց:

Այս երկիրները ծովէն դուրս ելելէն ետքը, ծովին յատակը Ապենեան լեռանց երկայնութեան վրայ Թուրինէն մինչեւ ի Սիկիլիա աւազի ու կրեղէն մառնի խաւեր ձեւացան

որ յանկարծական մղմամբ Ալպեան շղթային գլխաւոր լեռներոյն հանդերձ վեր վաղեցին ծովէն. այն ատեն զԱնկլիան Ֆրանսոյի ու Թերեւս ալ Սպանիան Ափրիկէի միացնող պարանոցները ձեղքեցան: Այս լեռանց մէջ ամփոփված յոգնաթիւ լճերու ամբարտակները խորտակեցան, և հագին հեղեղներ ճամբանուն վրայ դառնին ընդ քարշ ատրեայ թաւալեցին հոյտաց մէջ ու լցին դաննը մերթ կոպիճներով ինչպէս Քամարկաի և Քրաւի դաշտերը, և մերթբուսային հողով ու կաւով: Կովին ջուրերն ու ծղին ճօճելով ծոյգփանց փայլէն դէպ ի դամար վաղեցին և նախընթաց եղանակաց մէջ ձեւացած հողերը աւազով ծածկեցին, ինչպէս Կարքօնից երեզներուն վրայ. որիչ անդեր ալ լածով, կաւով ու խեղեղից մառնով ինչպէս Լօնտօնի շրջակաները. կամ տղմուտ հողով ինչպէս հարաւային Ամերիկայ ընդարձակ անապատները:

Այս և ատոր նման մասնաւոր հեղեղներու պատճառով նոյն հողերն ալ Զրհեղեղեան խաւեր կոչվեցան:

Ասոնցմէ խիստ շատ ետքը աւելի մեծ ու ահագին ջրհեղեղ մ'ալ ակեղի

ունեցած է հետեւեալ պատճառով:

Գիացված է թէ երկրիս առանցքն
եր վրայ կը ճօճայ և կոնաձեւ ծիր
մը կը դժէ տարածութեան մէջ:
Ասկէ է որ երբեմն մէկ բեւեռին վը-
րայ քանի մ'օր աւելի ձմեռ կ'ըլլայ
քան միւս բեւեռին վրայ, ինչպէս որ
հիմա հարաւային բեւեռին վրայ
վասն զի հոս սառնամանիքն աւելի
տարածեալ են քան ի միւս բեւեռը:
Բայց միշտ այսպէս եղած չ'է, և ե-
ղած է ժամանակ մը յորում ձմեռն
աւելի երկար էր հիւսիսային բեւե-
ռին վրայ, բայց յետոյ՝ երկրիս ա-
ռանցքին շարժմամբ այն բեւեռին
սառնամանեայ սահմանն ամփոփե-
ցաւ, և անոնցմէ բրգած սառոյցէ
լեռներն հալեցան և իրենց զարհու-
րելի հոսանաց մէջ առին քշեցին ոչ
միայն ժայռից կտորներ, այլ նոյն իսկ
ահագին ժայռեր՝ որոց մէկ մասը ե-
կած Պալթիկի մէջ ընկած են: Գիւ-
րին է այս տարօրինակ ճամբորդաց
հետքերն հետադառել, վասնզի իրենց
ճամբին վրայ գտված լեռանց կողե-
րուն քովտելով անոնց վէմերը դժած,
քերթած, յղկած են և իրենց անցից
աներկեւան նշանները թողած են հիւ-
սիսէն դէպ ի հարաւ:

Մինչեւ հիմա մեր յիշած ոտնա-
ւորքը խոսակերաց կարգէն էին: Զըր-
հեղեղեան հոգոց ձեւանալէն ետքը՝
մտակերք ալ սկսան յերեւան դալ, և
այս վերջին հոգոյ մէջ կը գտվին եղ-
նրկաց, ֆիլիբու, արջերու, գայլե-
րու, բորենիներու, շներու, և ըն նըշ-
խարներ:

Այս եղաւ երկրիս վերջին յեղա-
փոխութիւնը և ա՛յ անկէ ետքը տի-
բեց այն երկարատեւ խաղաղութիւ-
նը զոր կը վայլենք ցարդ: Թէպէտ
քանի մը թեթեւ դիպուածք տեղ
տեղ միայն վրդովեցին այս տիեզրա-
կան խաղաղութիւնը, և դեռ երբեմն
երբեմն գեանաշարժ ցնցումներ կը
դատահին, նոր նոր կղզիք և հրաբուխք
յերեւան կու գան, բայց ասոնք երկ-
րիս վրայ զգալի փոփոխութիւն մը
բերած չըլլալով՝ եղանակ մը չ'են
կարօղ կազմել:

Այսպէս աստ երկրիս կաղմուծիւնն սկսու ու հաստատեցաւ զանազան եղանակաց մեջ որք յաջորդապէս տեղի ունեցան անցնելով յեղափոխութենէ ի հանդարտութիւն և հանդարտութենէ ի յեղափոխութիւն. և որովհետեւ երկրիս կեղեւը կաղմոջ խաւերը իրարու վրայ երթալով կը հասանային ու կեդրոնական բուռն արտաքսոդութեանց աւելի կրնային գէմ գնել. ուստի և այն հանդարտութեան եղանակներն ալ համեմատաբար երթալով աւելի երկարատեւ միջոց մ'ունեցամ են, և հետեւապէս յեղափոխութիւնքն ալ երթալով օտարութիւննին կորուսած են. այնպէս զի արդի հանդարտութիւնը զոր կը մտնելնը մեղի համար վերջինն է, և թէպէտ մանր ու մունր գետնաշարժք հաղիւ հող կը պատահին դեռ, բայց այն արտաքայ կարգի ընդհանրական ու երկրակործան յեղափոխութիւնքն անկարելի են ալ այսուհետեւ կրնանք բռնել:

Յետևոյս աննարկով մը այն զանազան եղանակաց մէկ համառօտ քաղ-

ուածք կը բովանդակենք այն վերջաբանիս մէջ որպէս զի ամփոփ կերպով դաղափար մ'ունենանք երկրագնտիս գոյացութեան վրայ:

ԱՆՐԻՊՈՍՏՄԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ. — Կազմային նիւթերու զանգուած մը երթալով կը խտանայ կը սեղմի, և սկզբնական կեդրոն մը կը գոյանայ իր մէջ. այդ կեդրոնը կը բռնկի, բայց նիւթերը կ'այլին ու բոցավառ. հրազունա մը կը դառնայ ամբողջ երկիրս. ջերմութեան նուազանալէն՝ գծարավառ նիւթերու հրաշէկ կեղեւ մը առաջին անգամ կը ծածկէ զանոր երեսը. այդ կեղեւն երթալով կը պողի ու կը հաստանայ, և այն պողութենէն՝ մթնոլորտին մէջ մինչեւ այն ատեն առկա մնացած շոգիները ջուր կը կտրին, երկրագնտին վրայ կը թափին և զանոր ամբողջ կեղեւը կը ծածկեն. անկորոպիւն մը կը պատէ զաշխարհ թանձր մնաւալուզներու մէջ:

Ա. ԵՂԱՆԱԿ. — Կոմբոյն հողերը ծովն յատակը կը զետեղին. չորս վերելմունք ցամաքը կը զատեն Եւրոպայ մէջ. Վանտէի, Յինիսթեռի, Պալթայնի և Կալ նահանգին ժայռերը կը ցցվին:

Բ. ԵՂԱՆԱԿ. — Սէլւոյեան հող. կեանքը կ'ըսկար. ծովային լռեերն ու թուլամարմին մտղուկները կը ծնին: Մայն, Օռն, Մանչ, Առտնի և Ակովայի մէկ մասին վերելմունքը (1):

Գ. ԵՂԱՆԱԿ. — Տէլւոյեան հող. Հսկոյա-կան ձարխտներ պն երախոյ և ան-բընակ կղզիները կը ծածկեն. անթ-րակիտը կը զեակզին. թուլամարմինը կ'աճին. Վօժի, Զոանայ կեդրոնա-կան տափարակին, Պէլփիքայի և Քոռ-նուսյի մէկ քանի մասին վերելմունքը:

Դ. ԵՂԱՆԱԿ. — Անթրոպոլոգիայի և Զանբա-յին անոթներու շտեմարանը կը գո-յանան. կիսաձուկ և կիսասողուն քանի մը տեսակ կենդանիք կը ծնին. Անկիլիոյ վերելումը:

Ե. ԵՂԱՆԱԿ. — Անթրոպոլոգիայի և Զանբա-յին սողունը կը ծնին. ձկունք կը բազմանան: Եւրոպայ մէջ երկու գըլ-խաւոր տապալմունք այս եղանակս

կը կնքեն. մէկը կը բարձրացնէ Հինօր Տերձերը և միւսը Ռէն գետին ա-փանց տապալմունքը:

Զ. ԵՂԱՆԱԿ. — Երբեք հող. խեցե-ւոր կենդանիք կ'աճին ու տեսակներն կը բազմապատկի. դորտի տեսակ կեն-դանիք կը ծնին. Վօժի, Շէռի, Ալ-լիէի և Զոանայ կեդրոնական տա-րակաց քանի մը մասանց վերելումը:

Է. ԵՂԱՆԱԿ. — Ժիւրայեան հող. Հըս-կայաձուկ սողունը, կրայք և թուլունք կը ծնին: Ոսնաւոր կենդանիք առա-ջին անգամ կ'երեւին: Ժիւրաի, Քօթ տ'Օուի, Մօւլանի և ըն վերելմունքը:

Ը. ԵՂԱՆԱԿ. — Ստրոնի կրեւնայ գոյա-ցում: Ալպեան լեռները Ժիւրայի Տեա կցօղ լեռանց և Վիզօի վերելումը:

Թ. ԵՂԱՆԱԿ. — Վերին կրեւնայ գոյա-ցում: Բիրենեանց, Աբենինեանց, և Յուլեան Ալպեանց վերելում:

Ժ. ԵՂԱՆԱԿ. — Բարեկեան հող. Ոսնա-ւորաց տեսակները կը բազմապատկին. արդի ծանօթ խեցեւորաց առաջին անգամ երեւումը: Քօրսիքայի և Սար-

(1) Եւրոպայ լեռայ ին ինքնիւր գետերու և գետերու միջոցով հոսող ջրերն են. անոնք արեւմտեան կողմէն հոսող ջրերն են. անոնք արեւմտեան կողմէն հոսող ջրերն են. անոնք արեւմտեան կողմէն հոսող ջրերն են:

տէնիոյ մէկ մնասին, և Բարեղի ու Պօս-
տայի շրջակայից վերելումը:

ԺԱ. ԵՂԱՆԱԿ. — Կախաղ հող Յցա-
ժանեաց (mastodonte) և վիշապոյնոց
(dinotherium) երևումը. ծնունդ եր-
կածիկ (dicotylédones) անկոց: Արեւ-
մբտեան Ալպեանց վերելումը:

ԺԲ. ԵՂԱՆԱԿ. — Զրգիշեղան կախա-
ղաբնէն հող Յեր, ուրեղեղջիւր, եղ-
նիկ, կապիկ, ինչպէս նաև գիշակերք
կը գրաւեն զերկեր՝ նախ քան ըզմարդ:
Հոս անկարելի է չը գիտել կեւ մը
արդարև Տիացման արժանի: Եթէ
երկիրս այս զանազան յեղափոխու-
թիւններէ չ'անցնէր, բնակելի չէր
կրնար ըլլալ. վասն զի ոչ լեւ ու ձոր
կ'ունենայինք, ոչ գետ ու անոյշ ջուր.
Համատարած ու անեղը ովկեան մը
միայն կը ծածկէր բոլոր երկրագունան
ինչպէս ի սկզբան: Արդ յայտնի կը
տեսնենք թէ ինչ որ մեզի խառնա-
կութիւն ու անկարգութիւն կ'երև-
ւի, հարկ եր տինգերաց ամենակա-
րող ճարտարագետին անքննելի ծրա-
գրին մէջ, և այն յառաջգիմական յե-
ղափոդութիւնք պէտք էին հաստատ
ու հիմնական բարեկարգութեան մը

Համեկու Համար:

Իւր ամենիմաստ Նախախնամու-
թիւնը՝ որ բնութեան մէջ ամենայն
ինչ տիեզրական անյեղի օրինք կը
տնօրինէ, և որ՝ ինչպէս տեսինք մին-
չև հոս՝ ամենէն ստորնագոյն էակ-
ներէ սխելով աստիճանաբար յա-
ռաջ մղեց զարարչագործութիւնը,
այն եղանակիս մէջ հուսկ ապա պը-
սակեց իւր գործքը հիանալի հասըն-
տիրով մը, կատարելագոյն էակով մը՝
կաշող սիրելու, խորհելու և գործե-
լու, վերջապէս ի ճակատին ճատա-
գայթ մ'ատուածսոյն՝ և Մարդն
ստեղծաւ: Մարդ՝ որ խուզեց զեր-
կին և զերկիր, ու աստուածատուր
համճարովը՝ բնութեան դադտնեաց
խորը թափանցելով, անոր օրինաց
խելամուտ ըլլալով, հասաւ վերջա-
պէս գանոր տարերքը նուաճելու՝
օդ և լոյս, ջուր և շոգի, հուր և շփուր
(electricité), և գիտութեամբը՝ զա-
նոնք իւր սխալից իւր օգտին և հա-
ճոյից ծառայացնելով, տիրացաւ
երկրիս վրայ իրրեւ էակ բանական,
ազատ և անկախ:

Մարդոյս ստեղծումէն կ'ըսկսի ա՛լ
այսուհետև իրեն համար նոր եղա-
նակ մը՝ պատմական եղանակ, մարդ-

կութեան պատմութիւնը կամ մարդ-
կային պատմութեանց հիմնական թը-
վականը:

Ահա՛ մեր բնական գունտին հա-
կիրճ պատմութիւնը զոր կու ապ մեզի
գիտութեանց արդի վիճակը, և զոր
կ'ընծայենք մեր ազգայնոց: Այսպի-
սի գիտութիւն մը դեռ նոր ըլլալով
մեր ազգին համար, չ'ուզեցինք անոր
մանրամասնիկ հանգամանաց մէջ մը ա-
նիկ՝ ընթերցողաց միտքը շփոթելու:¹
ձանձրացնելու երկիւղիւ: Խու՛ն այս
երկս փորձ մըն է Երկրարանութեան,
և առ այժմ՝ բաւական ոչ թէ գի-
տուններ հասցնելու այլ գիտութեանց
ճաշակը միայն ծաւալելու հասարա-
կութեան մէջ, որ միակ փափաքնիս
է և սոյն բնական Տարեցոյցին ցան-
կալի նպատակներէն մէկը (1):

Ռ.

(1) Տե՛ս այս բարեցոյցին մէջ երկուրէն
հարստի մէջ Երևութանութիւնն էմ Պար-
սութիւնն երկնի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

S'il est un charmant gazon
 Que le ciel arrose,
 Où brille en toute saison
 Quelque fleur éclosé,
 Où l'on cueille à pleine main
 Lis, chèvrefeuille et jasmin,
 J'en veux faire le chemin
 Où ton pied se pose!

S'il est un sein bien aimant
 Dont l'honneur dispose,
 Dont le ferme dévouement
 N'ait rien de morose,
 Si toujours ce noble sein
 Bat pour un digne dessein,
 J'en veux faire le coussin
 Où ton front se pose!

S'il est un rêve d'amour
 Parfumé de rose,
 Où l'on trouve chaque jour
 Queique douce chose,
 Un rêve que Dieu bénit,
 Où l'âme à l'âme s'unit,
 Oh! j'en veux faire le nid
 Où ton cœur se pose!

VICTOR HUGO
(Chants du crépuscule)

Ո՛Վ ԻՄ ԳԵՂԵՅԻԿ

Թե կայ 'նդ ցօղով եթերաց
 Եղեմ երջանիկ,
 Ուր փողիողի մըշտարաց
 Նորանոր ծաղիկ:
 Ուր քաղելէ բարդ ի բարդ
 Շուշան, յամիկ, այծիվարդ,
 Չանի քու սոխցդ ընեմ
 Ճեմարան նողիկ:

Թե կայ 'նդ պատույն օրինօք
 Լանջ սիրազեցիկ,
 Որ զանձն ի սպաս և ի հոգ
 Տայ անայլայլիկ:
 Եւ թե այս սիրտ սիրալըբ
 Տրոփէ մըշտ ընդ փաստ ընտիր,
 Չանի ևս քու ծախատիդ
 Բա՛րձ ընեմ փափկիկ:

Թե կայ 'նդ սիրոյն հովանեաւ
 Երազ վարդբուրիկ,
 Ուր ըզմայլին անզըբաւ
 Ժպիտք համբուրիկ:
 Երազ երի՛ցս երանի
 Ուր հոգի 'նդ հոգւոյ խառնի,
 Ո՛հ, 'զանի ևս քու սրբտիդ
 Բո՛յն ընեմ զողտրիկ:

2 Ձարթի 1865

Վ. ՀԻԻԿՕ

Ո.

(Տող + Կերևուսաց)

ADIEUX A LA POÉSIE.

Il est une heure de silence
Où la solitude est sans voix,
Où tout dort, même l'espérance;
Où nul zéphyr ne se balance
Sous l'ombre immobile des bois.

Il est un âge où de la lyre
L'âme aussi semble s'endormir,
Où du poétique délire
Le souffle harmonieux expire
Dans le sein qu'il faisait frémir.

L'oiseau qui charme le bocage,
Hélas! ne chante pas toujours:
A midi caché sous l'ombrage,
Il n'enchanter de son ramage
Que l'aube et le déclin des jours.

Adieu donc, adieu, voici l'heure,
Lyre aux soupirs mélodieux!
En vain à la main qui t'effleure
Ta fibre encor répond et pleure:
Voici l'heure de nos adieux.

ՀՈՒՍԿՈՂՁՈՅՆ

ԱՌ ԲԱՆՍՏԵՂ ԾՈՒԹԻՒՆ

Գոյ և գոյ ժամ մի լռութեան
Յորում անկայն է միայնութիւն,
Յորում յոյս իսկ նընջէ համայն.
Յորում չէք մի զեփիւռ տառան
Մայրեաց ի ստուեր անխըրտին:

Գոյ և հասակ յորում քնարին
Նաեւ դողցես հողի ի քուն,
Յորում աւիւն բանբասեղծին
Շընչասպառի անդր ի ծոցին
Զոր խանդակոծ յուղէր թրթռուն:

Ոչ պուրակաց զլարձասփիւռ
Հաւիկն՝ աւա՞ղ, միշտ գայլայլէ.
Գողեալ ի ստուերս ի կեսաւուր՝
Լոկ՝ զարշարոյս ի գեղեկ իւր
Եւ՝ զարեւմուտ աւուրց հրճէ:

Ողջո՞յն ապա, քեզ ողջո՞յն հուսկ,
Մեկդաշնակ քընարդ հեծից.
Ի զուր ձեռին քեզ շօշափուկ
Տաս պատասխան դեռ ու արասուք,
Ժամն հասաւ մեր հուսկողջունից:

Reçois cette larme rebelle
Que mes yeux ne peuvent cacher.
Combien sur ta corde fidèle
Mon âme, hélas ! en versa-t-elle
Que tes soupirs n'ont pu sécher !

Sur cette terre infortunée,
Où tous les yeux versent des pleurs,
Toujours de cypres couronnée,
La lyre ne nous fut donnée
Que pour endormir nos douleurs.

Tout ce qui chante ne répète
Que des regrets ou des désirs ;
Du bonheur la corde est muette ;
De philomèle et du poëte
Les plus doux chants sont des soupirs

Dans l'ombrs auprès d'un mausolée,
O lyre, tu suivis mes pas ;
Et des doux festins exilée,
Jamais ta voix ne s'est mêlée
Aux chants des heureux d'ici-bas.

Pendue aux saules de la rive,
Libre comme l'oiseau des bois,
On n'a point vu ma main craintive
T'attacher comme une captive
Aux portes des palais des rois.

Ննկա՛լ գու՛ 'ղայս արատօր ըմբօստ
Զոր աչվիս չ'են կարող զըսպել :
Քանի՛ս, աւա՛ղ, ի լարդ անտուտ
Եհեղ հոգիս կայլակս ընդօստ
Զոր հեծքբդ բաւ չ'եղեն սրբբել :

Յայս վըշտըմբեր ձոր բիւրացաւ՝
Ուր արատասուեն ամեն աչեր,
Թուիս պոսակեալ միշտ նոճենեաւ՝
Քընար ոչ մեղ պարգեւեցաւ
Բայց ի հաշտել ըլցաւքս մեր :

Որ երգս հանէ՛ երգ սրտագին,
Ըղձանք կրկնէ կամ՝ կսկըծանք .
Երջանկութեան լարն է լըռին .
Պիւլպիւլին թէ բօնըստեղծին
Քաղցրագոյն երգն են հառաչանք :

Ստուերաշուք առ դամբանաւ,
Ո՛քնար, եկիր գու՛ 'ղիմ՝ կընի .
Ու հեռի հեշտ խնճոյից բնաւ՝
Զայն քո երբէ՛ք ոչ խառնեցաւ
Յերգս երջանկաց աստ ըստօրնի :

Ազատ իբրեւ հաւն անտառի՛
Առկախ յուռիս անդ գետափանց,
Երբէ՛ք ձեռն իմ՝ երկիւղալի
Ոչ քեզ կապեց որպէս գերի
Ի դրունս կայից թագաւորաց :

Des partis l'haleine glacée
Ne t'inspira pas tour à tour;
Aussi chaste que la pensée,
Nul souffle ne t'a caressée,
Hormis le souffle de l'Amour.

En quelque lieu qu'un sort sévère
Fit plier mon front sous ses lois,
Grâce à toi, mon âme étrangère
A trouvé partout sur la terre
Un céleste écho de sa voix.

Aux monts d'où le jour semble éclore
Quand je t'emportais avec moi
Pour louer celui que j'adore,
Le premier rayon de l'aurore
Ne se réveillait qu'après toi.

Aux bruits des flots et des cordages,
Aux feux livides des éclairs,
Tu jetais des accords sauvages,
Et comme l'oiseau des orages
Tu rasais l'écume des mers.

Celle dont le regard m'enchaîne
A tes soupirs mêlait sa voix,
Et souvent ses tresses d'ébène
Frissonnaient sous ma molle haleine,
Comme tes cordes sous mes doigts.

Կոուսակցու թեանց շունչ ստունապոթ
Չ'ազդեց բընաւ ի լարքս քս.
Մտածութեան նման մարութ'
Ո՛չ այլ գգուեց քեզ շունչ համբոյր
Բաց անապակ շնչէն Սիրոյ:

Ուր և ուրեք բախտն ապառուժ
Ընկճեց 'ղիմ' գլուխ ընդ իւր լըծօք,
Շնորհիւդ՝ հոգիս նժդեհ տրտում
Եդիտ յամայր ձայնի իւրում
Երկնային գանգ մ'ընդ աստեղօք:

Ի ծագ լեռանց արփիաճեմ
Յորժամ ընդ իս քեզ տանէի
Օրհնարանեւ 'զայն 'զոր պաշտեմ,
Անդրանիկ շողն 'յեթեր նրսեմ
Ո՛չ գայր 'յարթախիտ այլ քո՝ 'զկընի:

Ի շունդ ճրփից ու պարանայ,
Ի դալկահար հուրս փայլածուս
Վայրիս տայիր շէշտ նուագաց,
Եւ իբրու 'զհաւըն մրըրկաց
Քերէիր առ փրփրով ծովուց:

Նէ որ ակնարկ իս շղթայէ
Ի քո հառաչ 'զիւր ձայն խառներ,
Ու ստեպ իմ մեղմ' ու թոյլ շնչէ՛
Ինչպէս թելերդ իմ մատանցմէ,
Թրթուղին իւր սեւուկ մագեր:

Peut-être à moi, lyre chérie,
Tu reviendras dans l'avenir,
Quand, de songes divins suivie,
La mort approche, et que la vie
S'éloigne comme un souvenir.

Dans cette seconde jeunesse
Qu'un doux oubli rend aux humains,
Souvent l'homme, dans sa tristesse,
Sur toi se penche et te caresse,
Et tu résonnes sous ses mains.

Ce vent qui sur nos âmes passe,
Souffle à l'aurore, ou souffle tard;
Il aime à jouer avec grâce
Dans les cheveux qu'un myrte enlace
Ou dans la barbe du vieillard.

En vain une neige glacée
D'Homère ombrageait le menton;
Et le rayon de la pensée
Rendait la lumière éclip­sée
Aux yeux aveugles de Milton.

Autour d'eux voltigeaient encore
L'amour, l'illusion, l'espoir,
Comme l'insecte amant de Flore,
Dont les ailes semblent éclore
Aux tardives lueurs du soir.

Գուցէ առ իս, քնա՛ր սիրական,
Դու յապառնումն արասցես դարձ,
Երբ՝ երագովքն անմահութեան
Մահ մերձենայ, և կեանք բաժան
Իբր յիշատակ մեկնի ի բաց:

Ի մանկու­թեանն այն երկրորդում՝
Չոր բնձեռեն հեշտ մոռացոնք,
Մահկանացուն յիւր ժամ տրտում
Ըզքե՛ւ փարի անձկապատում,
Եւ դու՛նդ մատամբն հնչես գեղօնք:

Հողմ՛ այս՝ որ գնայ՝ զհոգևովք ըշտապ,
Փռչէ յայդուն կամ յօրաւարտ.
Սերէ խաղալ շնորհաշօշափ
Թէ բզ վարսիւք մըրտենակապ
Եւ թէ՛ զմօրուօք ծերունազարդ:

Ի զուր ապա ձիւն փրփրական
Ծածկէր բզ ծնօտըն Հոմերայ.
Եւ ճառագայթ մըտածութեան
Լընոյր ի շող երկնահասան
Ըզ բիւ աչաց կտր Միլտօնայ:

Դեռ բզ նորօք ճախր առնուին
Սէր, պատրանք, յոյս, որպէս Ֆլօրայն
Տարփիկ միջատ սր թեւք ընձուին
Անագանիկ և դան ի ծին
Գոգցես ի նշոյլս երեկոյեան:

Peut-être ainsi!... mais avant l'âge
Où tu reviens nous visiter,
Flottant de rivage en rivage,
J'aurai péri dans un naufrage
Loin des cieus que je vais quitter!

Depuis longtemps ma voix plaintive
Sera couverte par les flots,
Et, comme l'algue fugitive,
Sur quelque sable de la rive
La vague aura roulé mes os!

Mais toi, lyre mélodieuse,
Surnageant sur les flots amers,
Des cygnes la troupe envieuse
Suivra ta trace harmonieuse
Sur l'abîme roulant des mers.

LAMARTINE



Այսպէ՛ս դուցէ . . . բայց վաղագոյնս
Ես քան ըզ դարձդ ինձ այցելու՝
Ծբփծբփնլով ափանց յափունս
Կորեա՛լ իցեմ՝ յալեկոծունս
Հեռի յերկնից յորոց տամ չու:

Բազմաց հետէ ձայնս ողբածիգ
Ծածկեա՛լ գացի թաղեալ յալիս,
Ու զերդ մամուռ ինչ խուսափիկ
Ընդ աւազունս ափանց ալիք
Գլորեալ իցե՛ն ՚ղոսկերոտիս:

Այլ դու, քը՛նար շէշտից վսեմ,
Վերլուղեալ դառն ալեաց ի նուս,
Կարապից գունդ նախանձընդդէմ
Մտցէ յուղին քո դաշնածեմ
Ընդ թաւալուն անդունդ ծովուց:

ԼԱՄԱՐՏԻՆ

8 Թաւմոն 1870

Ռ



Պ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Օրացոյց.
2. Մշակական.
3. Ժամանակագրութիւն.
4. Վիճակագրութիւն.
5. Տարեբաշխութիւն.
6. Երկրաբանութիւն.
7. Բանասիրական.

Վ Ր Ի Պ Ի

Վիճակագրութեան մէջ Գերմանիոյ բնակիչքը 55 միլիոն կարգաւորու է:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* Գ.Ս.Ր.Վ. Публичная Библиотека *
7/Ճ1-1922
ИМЕНА, МЯСНИКЯНА
* Մ. ՍՅԱՆԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ *

« Ազգային գրադարան

NL0148373

13439

